

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ 2016-2017 ՈՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ	
Ռուսաց լեզու.....	3
Անգլերեն.....	10
Ֆրանսերեն.....	15
Գերմաներեն.....	20
Տարրական դպրոց.....	24
Երաժշտություն	34
Տեխնոլոգիա.....	37
Կերպարվեստ.....	42
Մեթոդական ցուցումներ՝ 2016-2017 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական հիմնական ընդհա- նուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ	46
ՀՀ ԿԳ նախարարի «2016-2017 ուսումնական տարում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության երաշխավորված դա- սագրքերի անվանացանկը հաստատելու մասին» 2016 թ. հունիսի 18-ի N 733Ա/2 հրամանը.....	52

ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՎԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՆԴՈՒՄԸ
2016-2017 ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՍԱԿՆԵՐ
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ

МЕТОДИЧЕСКОЕ ПИСЬМО

О преподавании учебного предмета “Русский язык”

В 2016/2017 учебном году основными нормативными документами являются Стандарт и Программа по русскому языку для основной школы (2011 г., материал размещен на сайте www.aniedu.am) и Стандарт и Программа по русскому языку для старшей школы (2009 г.).

Учебно-методические комплекты для занятий. При реализации образовательных программ необходимо руководствоваться государственными учебными программами, учебниками, учебно-методическими пособиями для учителей и пособиями для учащихся, рекомендованными Министерством образования и науки РА.

В новом учебном году в школах будут работать по новым учебникам для VII класса, которые разработаны в соответствии с современными требованиями и доработаны после апробации: Аракелян Н.К., Эйрамджянц А.А., Самуэлян С.Б. Русский язык, изд-во “Тигран Мец”; Бабаян Т.А., Егиазарян М.А., Лалаянц С.Г. Русский язык, изд-во “Манмар”.

Весь перечень утвержденных Министерством образования и науки РА учебников по русскому языку на 2016/2017 учебный год размещен на сайте www.aniedu.am.

В последние годы задачи обучения русскому языку определяются с позиций **компетентностного подхода**. При этом под компетенцией понимается сумма знаний, умений и личностных качеств, которые позволяют человеку совершать различные действия, в том числе и речевые. Коммуникативная направленность курса “Русский язык” реализуется на всех этапах обучения.

Приоритетной задачей обучения в основной школе является развитие речевой и мыслительной деятельности учащихся; коммуникативных умений и навыков, обеспечивающих свободное владение русским литературным языком в разных сферах и ситуациях общения; готовность и способность к речевому взаимодействию и взаимопониманию, потребность в речевом самосовершенствовании. Содержание обучения на этом этапе составляет освоение знаний о русском языке, его функционировании в различных сферах и ситуациях общения; основных нормах русского литературного языка и речевого этикета, обогащение словарного запаса школьников и расширение круга используемых ими грамматических средств.

Задачей обучения в старшей школе является развитие и совершенствование способности учащихся к речевому взаимодействию и социальной адаптации. На базовом уровне предусматривается углубление и расширение знаний о языковой норме и ее разновидностях, нормах речевого поведения в различных сферах общения, совершенствование умений моделировать свое речевое поведение в соответствии с условиями и задачами общения. На профильном уровне, помимо указанного, происходит углубление лингвистических знаний, а также изучение основных особенностей использования русского языка в сферах научного, делового, административного общения, совершенствование речевых умений в профессионально-ориентированной сфере общения.

Курс русского языка формирует важнейшие общеучебные умения, в основе которых также задействованы все виды речемыслительной деятельности: *коммуникативные* (владение всеми видами речевой деятельности и основами культуры устной и письменной речи, базовыми умениями и навыками использования языка в жизненно важных для учащихся сферах и ситуациях общения), *интеллектуальные* (сравнение и сопоставление, соотнесение, синтез, обобщение, абстрагирование, оценивание и классификация), *информационные* (умение осуществлять библиографический поиск, извлекать информацию из различных источников, умение работать со специальными текстами на русском языке, что в дальнейшем пригодится при обучении в вузе), *организационные* (умение формулировать цель деятельности, планировать ее, осуществлять самоконтроль, самооценку, самокоррекцию).

Важная роль отводится способности учащихся пользоваться разными видами словарей, обращаться к разнообразной справочной литературе для определения языковой нормы, связанной с употреблением в речи того или иного языкового явления. Выпускники должны научиться применять орфографические и пунктуационные нормы при создании и воспроизведении текстов делового, научного и публицистического стилей; использовать лексическую и грамматическую синонимию с целью совершенствования собственного речевого высказывания; применять на практике основные орфоэпические, лексические, грамматические нормы современного русского литературного языка; соблюдать нормы речевого этикета в различных сферах общения.

Невозможно обеспечить высокое качество образования без постоянного совершенствования содержания и методов преподавания. Какими бы интересными и современными ни были учебники и программы, ключевую роль в повышении качества образования играет учитель, который в соответствии с требованиями стандарта, должен способствовать формированию *мотивации* ученика к познанию русского языка, продемонстрировать ему, что школьные занятия – это не получение отвлеченных от жизни знаний, а наоборот – необходимая подготовка к жизни, ее узнавание, поиск полезной информации и навыки ее применения в реальной жизни. Уроки должны строиться по совершенно иной схеме. Если чаще мы встречаемся с объяснительно-иллюстративным методом работы, когда учитель, стоя перед классом, объясняет тему, а потом проводит выборочный опрос, то уже сейчас постепенно нужно идти к тому, чтобы на всех уроках упор делался на взаимодействие учащихся и учителя, а также взаимодействие самих учеников. Ученик должен стать полноправным участником образовательного процесса.

Таким образом, деятельность учителя русского языка должна существенно обновиться. Педагог должен непрерывно работать над повышением своего профессионального уровня. Он должен непрерывно учиться: по-новому готовиться к уроку, по-новому проводить урок, по-новому оценивать достижения обучающихся. Курсы повышения квалификации учителей, организуемые Национальным институтом образования, способствуют решению этих задач.

Важной структурой, организующей методическую работу учителей-предметников в школе, является методическое объединение. МО – это коллегиальный орган, способствующий повышению профессиональной мотивации, методической культуры учителей и развитию их творческого потенциала.

МО учителей русского языка является основным структурным подразделением методической службы школы, осуществляющим проведение учебно-воспитатель-

ной, опытно-экспериментальной и внеклассной работы. МО учителей русского языка создано для решения определенной части задач, возложенных на школу.

Работа МО нацелена на эффективное использование и развитие профессионального потенциала учителей, на сплочение и координацию их усилий по совершенствованию методики преподавания русского языка и литературы.

Задачи МО учителей русского языка и литературы:

- обеспечение высокого методического уровня проведения всех видов занятий;
- повышение профессиональной квалификации учителей, обобщение, описание и распространение положительного педагогического опыта учителей;
- продолжение работы по формированию ключевых компетенций учащихся в процессе обучения;
- организация исследовательской и проектной деятельности учащихся;
- совершенствование работы учителей с разными категориями учащихся на основе личностно-ориентированного подхода;
- использование в учебном процессе учебно-методических и дидактических материалов и программного обеспечения автоматизированных систем обучения (апробирование новых методик, технологий, новых учебников, корректировка учебных планов, образовательных программ);
- консультационно-диагностическая деятельность (диагностика готовности к обучению; диагностика и коррекция воспитания и развития учащихся; обучение и реабилитация больных детей, обучающихся на дому; система работы с детьми, имеющими высокую и низкую учебно-познавательную деятельность);
- мониторинг (диагностика результативности обучения; экспертная оценка итогов первого и второго полугодия, года);
- организация системной подготовки учащихся к ЕГЭ по русскому языку.

Для обсуждения проблем образования в процессе проведения методических совещаний по русскому языку предлагаем рассмотреть следующие вопросы:

1. Учебно-методическое обеспечение процесса преподавания в соответствии с перечнем учебников на 2016/2017 учебный год.
2. Планирование и организация образовательного процесса по русскому языку в основной школе с учетом нормативных требований.
3. Проблема повышения грамотности школьников в современных условиях.
4. Развитие видов речевой деятельности (слушание, говорение, чтение, письмо) на уроках.
5. Развитие умений и навыков письма и речи на русском языке.
6. Учебный диалог и его роль в формировании коммуникативной компетенции.
7. Современный урок русского языка и развитие профессионального мастерства педагога (из опыта работы педагогов с элементами мастер-классов, творческих мастерских).
8. ЕГЭ и другие формы мониторинга, итогового контроля.
9. Критерии оценки уровня подготовки выпускников основной и старшей школы по русскому языку. Анализ результатов контроля.
10. Работа с одаренными детьми как одно из приоритетных направлений современного образования.
11. Использование современных педагогических технологий на уроках русского языка. Представление опыта передовых учителей.
12. Эффективное использование современных информационных технологий, электронно-образовательных ресурсов на уроках русского языка в современной школе.

14. Использование электронно-образовательных и интернет-ресурсов в деятельности учителя русского языка.

15. Создание мотивирующей образовательной среды для успешного изучения русского языка.

16. Приоритетные цели обучения русскому языку в соответствии с государственным стандартом общего образования нового поколения.

17. Проектно-исследовательская деятельность учащихся: требования стандарта.

18. Создание условий для успешной реализации итоговой аттестации учащихся в рамках модернизации системы образования и др.

По темам заседаний организуются открытые уроки, доклады, внеклассные мероприятия, мастер-классы, апробируются новые технологии ведения учебных занятий: уроки в компьютерном классе, уроки-презентации, которые раскрывают неиспользованные возможности, демонстрируют потенциал учащихся. Все уроки анализируются, даются методические рекомендации, что поможет каждому учителю лучше увидеть резервы своей деятельности. Рекомендуется проводить дни, недели, декады русского языка, классные и внеклассные мероприятия, посвященные юбилейным датам.

Календарно-тематическое планирование является обязательным документом при подготовке к новому учебному году. Учитель в пределах учебных часов, отведенных на изучение предмета, составляет календарно-тематическое планирование с учетом особенностей класса и познавательных возможностей учащихся в соответствии с трехуровневым обучением.

Основными видами классных и домашних письменных работ учащихся являются обучающие работы, к которым относятся: упражнения, ответы на вопросы, тесты, изложения, сочинения и т.д.

По русскому языку проводятся текущие и итоговые письменные тематические работы.

Текущие тематические работы имеют целью проверить усвоение изученного программного материала; его содержание определяется учителем с учетом степени сложности, а также особенностей учащихся каждого класса, а частотность работ зависит от количества часов учебного плана.

Тематические работы проводятся после изучения наиболее значимых тем программы, а итоговые тематические – в конце полугодия и в конце года.

Время проведения итоговых и тематических работ в целях предупреждения перегрузки учащихся определяется общешкольным графиком, составляемым руководителями школ по согласованию с учителями. В один день следует давать в классе только одну контрольную письменную работу. При планировании тематических работ в каждом классе необходимо предусмотреть равномерное их распределение, не допуская скопления письменных тематических работ к концу полугодия.

Устный опрос является одним из основных способов учета знаний учащихся. Развернутый ответ ученика должен представлять собой связное, логически последовательное сообщение на определенную тему, показывать его умение применять определения, правила в конкретных случаях.

За полугодие и учебный год ставится итоговая оценка. Она является единой и отражает в обобщенном виде все стороны подготовки ученика по русскому языку: усвоение теоретического материала, овладение умениями, речевое развитие, уровень орфографической и пунктуационной грамотности.

Не следует перегружать учащихся домашними заданиями на выходные.

Усвоение знаний на занятиях по русскому языку проверяется через речевые действия учащихся. Основным средством контроля речевых умений и навыков служат устные и письменные задания, предполагающие определенные речевые дейст-

вия учащихся. Критерием оценки могут служить количественные и качественные показатели по каждому виду речевой деятельности.

Текущий контроль осуществляется на каждом занятии в процессе усвоения учащимися учебного материала. Этот вид контроля позволяет получить информацию о ходе работы, о трудностях, с которыми сталкиваются учащиеся, оценить речевые действия учащихся, корректировать их и т.д. Обобщающий и заключительный (итоговый) контроль выявляет конечный уровень владения учащимися разными видами речевой деятельности с помощью специальных контрольных заданий.

На начальном этапе обучения у учащихся закладываются основы начального лингвистического образования, в первую очередь фонетического и синтаксического аспектов, и развивается устная коммуникация на элементарном уровне.

Предлагаются следующие виды контроля, которые оцениваются в баллах: **устный опрос** (аудирование, говорение, чтение); **тематическая письменная работа; полугодовая итоговая работа.**

Минимальное число устных ответов соответствует количеству учебных часов в неделю, умноженных на два.

Во II классе в первом полугодии полугодовая оценка выводится лишь за устный опрос, во втором полугодии полугодовая оценка формируется из следующих составляющих: устный опрос, одна тематическая работа (списывание) и одна итоговая работа (списывание).

В III и IV классах в соответствии с общим положением следует проводить две тематические работы и одну итоговую в каждом полугодии.

Виды работ по классам: II класс – списывание; III класс – списывание, диктант; IV класс – списывание, диктант, ответы на вопросы, тест.

Списывание – способ проверки сформированности умений и навыков списывать с печатного текста. **Количество слов:** II класс – 15-20; III класс – 20-25; IV класс – 25-35.

Параметры оценки письменных работ (в баллах)

Списывание

II класс

10 – нет ошибок, работа написана аккуратно в соответствии с требованиями каллиграфии;

9 – 1 ошибка или 1 исправление, работа написана аккуратно;

8 – 2 ошибки, 1 исправление, работа написана аккуратно;

7 – 3 ошибки, 2 исправления;

6 – 4 ошибки, 2-3 исправления;

5 – 5 ошибок, 3 исправления;

4 – 6 ошибок, 4 исправления;

3, 2, 1 – более 6 ошибок.

III класс

10 – нет ошибок, работа написана аккуратно в соответствии с требованиями каллиграфии;

9 – 1 ошибка или 1 исправление, работа написана аккуратно;

8 – 2 ошибки, 1 исправление, работа написана аккуратно;

7 – 3-4 ошибки, 2 исправления;

6 – 5 ошибок, 2-3 исправления;

5 – 6 ошибок, 3 исправления;

4 – 7 ошибок;

3, 2, 1 – более 7 ошибок.

IV класс

10 – нет ошибок, работа написана аккуратно в соответствии с требованиями каллиграфии;

9 – 1 ошибка или 1 исправление, работа написана аккуратно;

8 – 2 ошибки, 1 исправление, работа написана аккуратно;

7 – 3-4 ошибки, 2 исправления;

6 – 5 ошибок, 2-3 исправления;

5 – 6 ошибок, 2-3 исправления;

4 – 7 ошибок;

3, 2, 1 – более 7 ошибок.

Диктант

Количество слов: III класс – 15-25; IV класс – 25-35.

III класс

10 – нет ошибок, работа написана аккуратно в соответствии с требованиями каллиграфии; **9** – 1 ошибка или 1 исправление, работа написана аккуратно;

8 – 2 ошибки, 1-2 исправления, работа написана аккуратно;

7 – 3 ошибки, 2-3 исправления;

6 – 4 ошибки, 2-3 исправления;

5 – 5-6 ошибок, 3-4 исправления;

4 – 7 ошибок;

3, 2, 1 – более 7 ошибок.

IV класс

10 – нет ошибок, работа написана аккуратно в соответствии с требованиями каллиграфии; **9** – 1 ошибка или 1 исправление, работа написана аккуратно;

8 – 2 ошибки, 1-2 исправления, работа написана аккуратно;

7 – 3 ошибки, 2-3 исправления;

6 – 4 ошибки, 2-3 исправления;

5 – 5-6 ошибок, 3-4 исправления;

4 – 7 ошибок;

3, 2, 1 – более 7 ошибок.

Ответы на вопросы

Количество ответов: IV класс – 3-5. При оценке ответов на вопросы учитывается полнота ответов и допущенные орфографические и пунктуационные ошибки (по нормам диктанта).

Тест. Для проверки знаний применяется набор тестовых заданий разных типов, которые охватывают основные вопросы темы. Количество заданий по разным темам может быть различным (4 и более).

На основании общих рекомендаций по применению системы оценки минимальное число тематических работ в V-XII классах в каждом полугодии должно соответствовать количеству учебных часов в неделю. В конце полугодия следует проводить итоговую работу.

В V-XII классах тематические письменные и полугодовые итоговые работы выявляют конечный уровень владения учащимися разными видами речевой деятельности, а также знания по лексике, морфологии, синтаксису, стилистике.

В качестве письменных (тематических, итоговых) работ рекомендуются: диктант, ответы на вопросы, тест, изложение.

Диктант

Количество слов: V класс – 30-45; VI класс – 45-55; VII класс – 55-70; VIII класс – 70-80; IX класс – 80-100; X класс – 100-120; XI класс – 120-180; XII класс – 180-200.

Объем школьных диктантов для классов с углубленным изучением предмета может быть увеличен на 15-20 слов.

Параметры оценки диктанта

Балл	Количество ошибок
10	0/0
9	0/1, 0/2, 0/3, 1/0, 1/1
8	0/4, 0/5, 0/6, 1/2, 1/3, 1/4, 2/0, 2/1, 2/2, 2/3, 3/0
7	0/7, 0/8, 1/5, 1/6, 1/7, 2/4, 2/5, 3/1, 3/2, 3/3, 4/0, 4/1
6	0/9, 1/8, 1/9, 2/6, 2/7, 3/4, 3/5, 4/2, 4/3, 5/0, 5/1
5	0/10, 2/8, 3/6, 3/7, 4/4, 4/5, 4/6, 5/2, 5/3
4	0/11, 2/9, 3/8, 4/7, 5/4, 5/5, 6/0, 6/1, 6/2, 6/3, 6/4, 7/0, 7/1, 7/2, 7/3, 8/0, 8/1
3, 2, 1	12 и более орфографических и пунктуационных ошибок

Ответы на вопросы

Количество ответов: V класс – 5-6; VI класс – 6-7; VII класс – 7-8;

VIII класс – 8-9; IX класс – 9-10; X класс – 10-12; XI класс – 12-13; XII класс – 13-15.

При оценке ответов на вопросы учитывается полнота ответов и допущенные орфографические и пунктуационные ошибки (по нормам диктанта).

Тест. В V-XII классах можно использовать следующие задания: установление соответствия, выбор правильного ответа, установление правильной последовательности, а также тесты открытой формы, восстановления и т.д. Способы оценивания тестов в начальной и основной школе одинаковы.

Изложение

Количество слов: V класс – 60-80; VI класс – 80-100; VII класс – 100-120; VIII класс – 120-140; IX класс – 140-160; X класс – 160-190; XI класс – 190-220; XII класс – 220-240.

Критерии оценки изложения: полное или частичное раскрытие темы; соответствие структуры текста плану; наличие смысловых частей текста; последовательность и логичность изложения; соответствие типу, стилю речи текста-оригинала; правильность грамматического строя речи; оценка словарного запаса; речевые недочеты (неоправданный повтор, употребление слова в несвойственном ему значении, нарушение стилового единства и т.п.)

10 – тема раскрыта полностью, содержание передано логично и последовательно в соответствии с планом, учтен стиль текста-оригинала, передано его жанровое и стилистическое своеобразие, богато в лексическом отношении, нет фактических ошибок в изложении, нет речевых и грамматических ошибок.

9 – тема раскрыта полностью, содержание передано логично и последовательно в соответствии с планом, передано его жанровое и стилистическое своеобразие, учтен стиль текста-оригинала, использован богатый лексический материал, нет фактических ошибок, допущены 1-2 речевые и грамматические ошибки.

8 – тема раскрыта достаточно полно, содержание передано логично и последовательно в соответствии с планом, использован нужный лексический материал. Допущены 2-3 речевые и грамматические ошибки.

7 – тема раскрыта, но есть некоторые недочеты в последовательности изложения материала, допущено 3-4 речевых и грамматических ошибок.

6 – содержание текста в основном передано, при этом может быть допущено не более 4-5 речевых и грамматических ошибок.

5 – схематично раскрыто содержание текста, не передано его жанровое и стилистическое своеобразие, бедное в лексическом отношении, с фактическими ошибками; допущено не более 5-6 речевых или грамматических ошибок.

4 – схематично раскрыто содержание текста, не передано его жанровое и стилистическое своеобразие, бедное в лексическом отношении, с фактическими ошибками, допущено не более 6-7 речевых или грамматических ошибок.

3, 2, 1 – тема не раскрыта, количество ошибок превышает количество, указанное при оценке диктанта в 4 балла.

В заключение в помощь учителю для более плодотворной работы предлагаем следующие интернет-ресурсы.

РУССКИЙ ЯЗЫК

<http://rusgram.narod.ru> – Грамматика русского языка – ресурс, содержащий электронную версию Академической грамматики русского языка, составленной Академией наук СССР (Институт русского языка). <http://www.gramota.ru> – справочно-информационный интернет-портал «Русский язык».

<http://www.ruscorpora.ru> – Национальный корпус русского языка.

<http://www.grammar.ru> – Русский язык: говорим и пишем правильно.

<http://www.slovari.ru> – Электронные словари.

ЛИТЕРАТУРА

<http://profile-edu.ru/> – Профильное обучение в старшей школе.

<http://som.fio.ru/> – Сетевое объединение методистов.

<http://www.feb-web.ru> – Фундаментальная электронная библиотека «Русская литература и фольклор».

<http://www.likt590.ru/project/museum/> – Виртуальный музей литературных героев.

<http://www.ug.ru/> – «Учительская газета».

<http://lit.1september.ru> – Газета «Литература» и сайт для учителя «Я иду на урок литературы».

*Жанна Багдасарова
Сусанна Лалаянц
Карине Тамироглян*

ԱՆՔԼԵՏԵՆ

2016 թ. ԿԱԻ անգլերենի մասնախումբը նոր ծրագրով իրականացրեց անգլերենի ուսուցիչների նախաատեստացիոն 120-ժամյա վերապատրաստման դասընթացները: Այս վերապատրաստումն առանձնահատուկ էր նրանով, որ ուսուցչին հնարավորություն ընձեռեց առավել ինքնուրույն, ստեղծագործ մոտեցում ցուցաբերելու իր հետագա մանկավարժական գործունեության ընթացքում:

Հաշվի առնելով օտար լեզվի ժամանակակից դասին ներկայացվող պահանջները, միջազգային փորձը, ՏՀՏ-ների և մեդիամիջավայրի կիրառման կարևորությունը, ինչպես նաև հետազոտությունների և հարցումների արդյունքները՝ վերանայվեցին և բարելավվեցին ուսուցիչների նախաատեստացիոն վերապատրաստումների ծրագրային մի շարք դրույթներ, որոնք հիմք հանդիսացան վերապատրաստման թե՛ կառուցվածքային և թե՛ բովանդակային փոփոխությունների համար: Ըստ այդմ՝ վերապատրաստման դասընթացին հաղորդվեց

ավելի գործնական և կիրառական ուղղվածություն: Կատարվեցին հետևյալ կառուցվածքային փոփոխությունները.

- Լսարանային որոշ ժամերին փոխարինեցին ինքնուրույն աշխատանքները, որոնց նպատակն է օգնել ուսուցչին՝ զարգացնելու և ամբողջականացնելու առաջարկված թեմաները: Այդ ինքնուրույն աշխատանքները յուրաքանչյուր նիստից առաջ քննարկվեցին և դրանց վերաբերյալ տրվեցին անհրաժեշտ մեթոդական ցուցումներ: Ամենակարևորը այս բաղադրիչում նոր, ինքնուրույն աշխատանքի կիրառումն է դասերի ընթացքում, ինչը հնարավորություն է տալիս փորձարկել աշխատանքը, նշել առավելությունները, թերությունները, ինչպես նաև՝ բարձրացնել դասի արդյունավետությանն ուղղված ինքնուրույն աշխատանքի նշանակությունը:

- Ներմուծվեց պրակտիկ փոխադարձ դասալսումների բաղադրիչը, որը հնարավորություն տվեց ուսումնասիրել գործընկերների դասավանդման ընթացքը և գործընկերային միջավայրում քննարկել դասն ավելի արդյունավետ դարձնելու հնարավորությունները:

- Ներմուծվեց վերջնական անհատական հետազոտական աշխատանքի բաղադրիչը: Կարևորն այն է, որ ուսուցիչները խորացնում են իրենց ունեցած գիտելիքները այս կամ այն թեմայի վերաբերյալ, տեղեկատվական անսպառ միջավայրում կողմնորոշվելու, ստեղծագործական մտածողությունը զարգացնելու և ամենակարևորը՝ հետազոտական աշխատանք կատարելու և ներկայացնելու կարողությունները:

Անգլերեն առարկայից սովորողների ուսումնաստության արդյունքների գնահատման մոտեցումներ

2016-2017 ուսումնական տարում անգլերենից սովորողների գիտելիքների գնահատման գործընթաց իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել «Մեթոդական ցուցումներ՝ 2016-2017 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ» փաստաթղթով: Սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման խնդիրների բացահայտման նպատակով անհրաժեշտ է աստիճանաբար ընդլայնել ուսուցանող գնահատման տարբեր ձևերի կիրառումը: Վերջինիս համար արդյունավետ են հայտորոշիչ թեստերի, բաց հարցերով բանավոր հարցադրումների, կարճ պատասխաններ ակնկալող գրավոր առաջադրանքների կիրառումը:

Ծրագրեր

2016-2017 ուստարում անգլերեն առարկայի ուսուցումը միջին /բեռնաթափված տարբեակը տեղակայված է ԿԱԻ ինտերնետային կայքում/ և ավագ դպրոցներում կկազմակերպվի գործող 12-ամյա դպրոցի /Երևան, 2007/ «Անգլերեն լեզու» առարկայի չափորոշիչներով ու ծրագրերով:

Ինչ վերաբերում է երրորդ օտար լեզվին, ապա այն դասավանդվելու է երկրորդ օտար լեզվի գործող ծրագրերի և դասագրքերի շրջանակում, գրեթե նույն թեմատիկայով և նույն չափորոշչային պահանջներով զարգացնել սովորողների հաղորդակցական կարողությունները: ԿԱԻ և ԳԳ նախարարության

կայքերում տեղակայված են անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի, 5-9-րդ դասարանների ծրագրերն ու չափորոշիչները:

Անգլերենը որպես երրորդ օտար լեզու ներկայացված է համապատասխանաբար շաբաթական 1,5 և 2 ժամանոց ծրագրերով:

Այսպիսով, անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցմամբ, շաբաթական 2-ժամյա ծրագրով աշխատող դպրոցներում միավորային գնահատումն իրականացվում է երկրորդ օտար լեզվի գնահատման կարգով, իսկ շաբաթական 1,5-ժամյա ծրագիր իրականացնող դպրոցների համար տրված են մեթոդական ցուցումներ, որոնց համաձայն կիրականացվի գնահատում:

Պասագրքեր

2016-2017 ուստարում հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանում անգլերեն լեզվի ուսուցումը կազմակերպվելու է Գ. Գասպարյանի English 3, «Արևիկ», 2015, և Մ. Ապրեսյանի «ABC 3», «Մանմար», 2015 դասագրքերով: Նշված դասագրքերն ունեն նաև մեթոդական ձեռնարկներ և աշխատանքային տետրեր:

4-րդ դասարանում ուսուցումը կազմակերպվելու է Գ. Գասպարյանի English 4, «Արևիկ», 2016, և Մ. Ապրեսյանի English 4, «Մանմար», 2016 դասագրքերով:

5-րդ դասարանում ուսուցումը կազմակերպվելու է Գ. Գասպարյանի English 5, «Մանմար», 2014 և Լ. Գրիգորյանի English 7, «Զանգակ», 2014 դասագրքերով:

6-րդ դասարանում՝ Գ. Գասպարյան, English 6, «Մանմար», 2015, և Լ. Գրիգորյանի English 6, «Զանգակ», 2015 դասագրքերով, 7-րդ դասարանում՝ Գ. Գասպարյան, English 7, «Մանմար», 2014 և Լ. Գրիգորյանի English 7, «Զանգակ», 2014 դասագրքերով, 8-րդ դասարանում՝ Գ. Գասպարյան, English 8, «Մանմար», 2015 և Լ. Գրիգորյան, English 8, «Զանգակ», 2015, դասագրքերով, 9-րդ դասարանում՝ Գ. Գասպարյան, English 9, «Մանմար», 2016, և Լ. Գրիգորյան, English 9, «Զանգակ», 2016: Նշված բոլոր դասագրքերն ունեն մեթոդական ձեռնարկներ: Ձեռնարկներում ներկայացված են ուսուցման և ուսումնառության նոր ձևեր, որոնք ուսուցչից պահանջում են աշխատանքային նոր մոտեցումներ ու մեթոդներ: Այստեղ առանձին-առանձին ներկայացված են խոսքային գործունեության բոլոր 4 տեսակների մատուցման ձևերն ու հնարները: Ձեռնարկների առավելությունն այն է, որ դրանք չեն սահմանափակում ուսուցչի գործունեությունը, նրան մղում են ստեղծագործական աշխատանքի և խրախուսում տարատեսակ մեթոդների և հնարների կիրառումը:

Լ. Գրիգորյանի 5-9-րդ դասարանների դասագրքերն ունեն նաև CD՝ ունկընդման հմտությունները զարգացնելու համար: 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում անգլերենի ուսուցումը կազմակերպվելու է Մ. Բաղդասարյան, English 10, «Մանմար», 2010, Մ. Բաղդասարյան, English 11, «Մանմար», 2010, և Մ. Բաղդասարյան, English 12, «Մանմար»՝ 2011 ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքի համար նախատեսված դասագրքերով: Հումանիտար հոսքում տվյալ դասարաններում ուսուցումը կազմակերպվելու է Մ. Բաղդասարյան, English 10, «Մանմար», 2010, Մ. Բաղդասարյան, English 11, «Մանմար», 2010, և Մ. Բաղդասարյանի English 12, «Մանմար», 2011՝ հումանիտար հոսքի

համար նախատեսված դասագրքերով: Ավագ դպրոցի նշված դասագրքերն ունեն մեթոդական ձեռնարկներ:

Անգլերենի բոլոր դասագրքերի հիմքում ընկած են հաղորդակցական ուղղվածության և ստեղծագործական ունակությունների զարգացման սկզբունքները: Անգլերենի ուսուցման բոլոր փուլերում ուսուցման ցանկացած մեթոդ կիրառելու դեպքում ուսուցիչը պետք է շեշտը դնի սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացման վրա: Խորհուրդ է տրվում ավելի շատ անցկացնել քննարկումներ, զրույցներ, դերային խաղեր: Անհրաժեշտ է հրաժարվել մեխանիկական կառուցվածքով դասապրոցեսից, օրինակ՝ տեքստը կարդալ, կատարել տրված վարժությունները: Անգլերենի դասագրքերում կան ուսումնական որոշ նյութեր, որոնց վերնագրերը բառացիորեն նույնը չեն՝ ինչպես ծրագրերում, բայց բովանդակությամբ համապատասխանում են դրանց: Օրինակ՝ 5-րդ դասարանի ծրագրում ներկայացված է «Ճանապարհորդություն» թեման, որը կարելի է ուսումնասիրել Գ. Գասպարյանի 5-րդ դասարանի դասագրքի «Իմ նախասիրությունները և հետաքրքրությունները» թեմայի ուսումնասիրման շրջանակներում: Անհրաժեշտ է նշել նաև այն հանգամանքը, որ պարտադիր չէ՝ դասագրքերի թեմաների հաջորդականությունը լիովին համապատասխանի ծրագրում ընդգրկված թեմաների հաջորդականությանը:

Մեթոդական ցուցումներ

Խորհուրդ է տրվում երրորդ դասարանում անգլերենի ուսուցումը կազմակերպել նախաայբբենական շրջանի բանավոր մի շարք թեմաների ուսուցմամբ՝ աշակերտների տարրական հաղորդակցական կարողությունների ձևավորման նպատակով: Հանրակրթական դպրոցի պետական չափորոշչով և ծրագրով, տվյալ կարողությունների զարգացման նպատակով, նախատեսվում է 10-12 ժամ: Նշված ժամերն ըստ անհրաժեշտության կարող են ավելացվել ուսուցչի կողմից: Ուսուցման այս փուլում ներմուծվում են հաղորդակցական ամենատարրական խոսքային նմուշներ, փոքրածավալ բառապաշար, ինչպես նաև տառեր (յուրաքանչյուր դասին՝ 3 տառ, միայն բանավոր ուսուցմամբ) նախաայբբենական շրջանում, հաղորդակցական հմտություններ ձևավորելու նպատակով, նախատեսվող թեմաների դասավանդումն ապահովելու համար: Այդ շրջանում աշակերտներին կարելի է սովորեցնել կարճ ոտանավորներ, խաղեր, երգեր, զանազան խոսքային նմուշներ: Այս առումով՝ ուսուցչին կարող է օգտակար լինել ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված՝ Մ. Մարգարյան և այլք, English A ձեռնարկը, որը պարունակում է նյութեր՝ աշակերտներին ուսուցանելու համար, մեթոդական ցուցումներ և լրացուցիչ բառապաշար: **Բանավոր խոսքի ուսուցման շրջանում սովորողները գնահատվում են:**

Առաջարկվում է 3-րդ դասարանում թեմատիկ գրավոր աշխատանք անցկացնել միայն 2-րդ կիսամյակում: Այդ ընթացքում անցկացվում է միայն մեկ թեմատիկ գրավոր աշխատանք, իսկ կիսամյակի վերջում՝ կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք: Առաջին կիսամյակի համար նախատեսված են մարզողական-ուսուցողական գրավոր աշխատանքներ՝ աշխատանքային տեղերում: 4-րդ և 5-րդ դասարաններում գրավոր աշխատանքներ տրվում են հենց

առաջին կիսամյակից՝ 2 թեմատիկ և 1 կիսամյակային: Ավագ դպրոցում թեմատիկ գրավոր աշխատանքների քանակի և գնահատման համակարգի վերաբերյալ տեղեկատվություն կարող էք ստանալ «2016-2017 ուստարվա հանրակրթական դպրոցների գնահատման համակարգի վերաբերյալ մեթոդական ցուցումներում»:

Անհրաժեշտ ենք համարում մեկ անգամ ևս ուսուցիչներին հիշեցնել, որ 4-11-րդ դասարաններում, որպես գրավոր աշխատանք, բացի թեստային առաջադրանքներից՝ կարող են նաև տրվել թելադրություններ, փոխադրություններ, էսսեներ:

Ավագ դպրոցի 10-րդ դասարանում այն աշակերտները, որոնք չունեն անգլերենի գիտելիքների համապատասխան մակարդակ, առաջարկվում է նրանց 1-2 ամիս տրամադրել որոշակի գիտելիքներ ձեռք բերելու գործընթացին՝ հետագա ուսուցումը կազմակերպելու համար:

2014թ. օտար լեզուների բաժինը ԱՄՆ Խաղաղության կորպուսի հետ համատեղ առաջին անգամ անցկացրեց հանրապետության միջին և ավագ դպրոցների անգլերեն լեզվի ուսուցիչների Online (հեռավար) վերապատրաստում: Վերապատրաստումներն անցկացվել են WIKI ծրագրով Վիկիպեդիա կայքում: Մեծ էր անգլերենի ուսուցիչների հետաքրքրությունը, ովքեր հաճույքով ընդգրկվեցին ու մասնակցեցին Online դասընթացի վերապատրաստումներին: Հիմնականում տրվել են անգլերենի, և ընդհանրապես, լեզուների ուսուցման արդի հիմնախնդիրներին վերաբերող ամենակարևոր թեմաները: 2015թ. հոկտեմբերին սկսվեց երկրորդ խմբի վերապատրաստումը Moodle ծրագրով: Online վերապատրաստումները վարել են հանրապետության և արտասահմանյան նշանավոր ու փորձառու մասնագետներ, ուսուցիչներ:

Ի՞նչ է տալիս առցանց հեռավար վերապատրաստումն ուսուցչին: Այն զարգացնում է ուսուցչի առարկայական, լեզվական գիտելիքներն ու կարողությունները, բարձրացնում մեթոդական պատրաստվածությունը, հնարավորություն է տալիս բարձրացնել ուսուցչի մասնագիտական վարպետությունը: Ուսուցիչները շփվում են հանրապետության տարբեր մարզերի, ինչպես նաև՝ արտերկրի ուսուցիչների հետ, կարծիքներ փոխանակում, լսում միմյանց և հետևում դասավանդման գործընթացին:

Online (հեռավար) վերապատրաստման դասընթացին մասնակցած ուսուցիչները հետապնդում են մեկ նպատակ՝ լինել այնքան արդիական, որքան հնարավոր է, այսինքն՝ լինել տեղյակ և հաղորդակից փոփոխություններին և նորամուծություններին անգլերենի ուսուցման գործընթացում: Այսօր բազմաթիվ ուսուցիչներ դիմել են այդ վերապատրաստմանը մասնակցելու համար: Այն կսկսվի 2016թ. հոկտեմբերին: Հարգելի՛ ուսուցիչներ, ցանկության դեպքում կարող էք դիմել հետևյալ հեռախոսահամարներով՝ 010-57-15-31 և 096-57-15-31 ԿԱԻ Օտար լեզուների բաժին:

*Անուշ Խաչիկյան
Հասմիկ Օհանյան
Կարինե Ղողոպյան*

ՖՐԱՆՍԵՐԵՆ

Օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռնմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանն ու գնահատմանը, բնության ու ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն, գեղագիտական, բարոյական, սոցիալական, համամարդկային և ազգային արժեքների գիտակցմանը, պահպանմանը և փոխանցմանը:

Հանրակրթական դպրոցում օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակն է՝ **ընդլայնել սովորողի՝ հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները:**

Հանրակրթական դպրոցի ֆրանսերենի առարկայական չափորոշիչը և ծրագրերը հնարավորություն են տալիս դասապրոցեսը կազմակերպել՝ հարազատ մնալով Լեզուների Իմացության/իրազեկության Համաեվրոպական Համակարգի որդեգրած սկզբունքներին: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս, անկատար են սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողություններն ընդլայնելու ուղղությամբ տարվող աշխատանքները և մասամբ են նպաստում օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակի իրագործմանը: Որո՞նք են պատճառները: Անդրադառնանք մի քանի հանգուցային պատճառների:

Սկսենք նրանից, որ դեռ ոչ բոլոր ուսուցիչներն են փորձում տեսնել և պահպանել չափորոշիչ-ծրագիր-դասագիրք տրամաբանական կապը: Չափորոշիչը շարունակում է մնալ գրադարակներում, իսկ ուսուցիչները, մասամբ օգտվելով ծրագրերից որպես հիմնական «ուղեցույց» և «աշխատանքային գործիք», շարունակում են օգտագործել դասագիրքը: Ըստ դասագրքի թեմաների կազմում են ժամանակացույց, որտեղ նշվում են միայն թեման և այն ուսումնասիրելու ժամկետը, և դա անվանում են թեմատիկ պլանավորում: Սակայն նշված փաստաթուղթը թեմատիկ պլանավորում չէ: Այն չի կարող օգնել ուսուցչին՝ համակարգված կազմակերպել իր դասաժամը, կարող է օժանդակել միայն ճիշտ վարելու մատենավարությունը: Թեմատիկ պլանավորման մեջ հստակ երևում է թեման կամ թեմատիկ միավորը, դրան հատկացված ժամաքանակը, ընդհանուր նպատակը (ըստ խոսքային գործունեության տեսակների), տվյալ թեմայի շրջանակներում ուսումնասիրելիք քերականական, բառապաշարային նյութը, ակնկալվող արդյունքը կամ կարողությունը, որը պետք է զարգացնել տվյալ թեմայի կամ թեմատիկ միավորի շրջանակներում, նախագծի թեման, եթե այդպիսին նախատեսվում է, երկրագիտությանը վերաբերող ուսումնական նյութը, տնային և դասարանական աշխատանքները: Այսպիսի պլանավորում կազմելու համար անհրաժեշտ է աշխատել հանրակրթական դպրոցի ֆրանսերենի պետական չափորոշչով, ծրագրով և դասագրքով միաժամանակ: Անհրաժեշտության դեպքում պլանավորման մեջ կարող են տեղ գտնել նաև լրացուցիչ և բնագիր նյութերը, եթե այդպիսիք նախատեսվում է օգտագործել: Նշված աշխատանքը հեշտ չէ, աշխատատար է: Այն պահանջում է ստեղծագործական մոտեցում, ճիշտ կողմնորոշում: Սակայն խնամքով կազմված պլանավորումը հու-

սալի աշխատանքային գործիք կարող է լինել ուսուցչի համար, ինչպես լավ սրված և ամուր կացինը՝ փայտահատի համար: Ստորև ներկայացնում ենք թեմատիկ պլանավորման մեկ մոդել:

NN	Thème	Heures	Objectif	Lexique Devoir	Grammaire Devoir	Civilisation	Savoir- faire	Projet
----	-------	--------	----------	-------------------	---------------------	--------------	------------------	--------

Առաջարկվող տարբերակը միայն օրինակ է, և յուրաքանչյուր ուսուցիչ կարող է կատարել փոփոխություններ ավելացնելով կամ պակասեցնելով աղյուսակի պահանջները:

Ուսուցչի համար խիստ կարևոր է անելիքի, իր պարտականությունների և իրեն անհրաժեշտ մասնագիտական որակների գիտակցումը: 2014 թվականին, Հայաստանի և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության միջև կնքված «Լեզվաբանական համաձայնագրի» շրջանակներում մշակվեց «Ֆրանսերեն դասավանդողների իմացության/իրազեկության ստուգանմուշային համակարգ» փաստաթուղթը, որը կարող է կիրառվել ուսուցիչներին հավաքագրելու/ընտրելու, նրանց գնահատելու, շարունակական կրթության կարիքները վերլուծելու և մասնագիտական զարգացումը ապահովելու համար:

Փաստաթղթում խոսվում է այն գիտելիքների, կարողությունների և հմտությունների մասին, որոնք անհրաժեշտ են ֆրանսերենի ուսուցչին՝ ապահովելու համար ֆրանսերենի պետական առարկայական չափորոշում արձանագրված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի այն ամբողջությունը, ինչը սովորողը պետք է ձեռք բերի «ֆրանսերեն» ուսումնական առարկայի ուսումնասիրման արդյունքում:

Մասնավորապես նշվում է .

1. *Առաջնորդվել ազգային օրենքներով, արժեքներով և չափորոշիչներով:*
2. *Համագործակցել և հաղորդակցվել՝ բարոյագիտական նորմերին համապատասխան:*
3. *Հաղորդակցվել ֆրանսերենով՝ գրագետ և արդյունավետ կերպով:*
4. *Որոնել աղբյուրներ, մշտապես թարմացնել և պատրաստել դասը՝ հաշվի առնելով աշակերտների տարասեռությունը:*
5. *Մոտիվացնել, խթանել և կառավարել դասարանը:*
6. *Կիրառել գնահատման տարբեր տեսակներ:*
7. *Կատարելագործել մասնագիտական կարողությունները (մշտապես ներգրավված լինել ինքնակրթության մեջ):*

Այս պահանջներից յուրաքանչյուրը մանրամասնված է ըստ գիտելիքների, կարողությունների և հմտությունների:

Այսպես.

1. *Առաջնորդվել ազգային օրենքներով, արժեքներով և չափորոշիչներով:*
Գիտելիքները

Դասավանդողը պետք է իմանա՝

- ՀՀ կրթական և լեզվական քաղաքականությունը,
- բոլոր աստիճանների չափորոշիչները (տարրական, միջին, ավագ դպրոց),
- բոլոր դասարաններում ֆրանսերենի դասավանդման ծրագրերը,

- իր ուսումնական հաստատությունում գործող վերջին ծրագրերը:

Կարողությունները

Դասավանդողը պետք է կարողանա՝

- վերլուծել և հիմնավորել ֆրանսերենի դասին իր կողմից ընտրված մանկավարժական և բարոյագիտական մոտեցումները՝ հաշվի առնելով ՀՀ կրթական և լեզվական քաղաքականությունը,

- զուգակցել ազգային և ֆրանսախոս մշակույթները,
- զուգադրել և փոխանցել միջմշակութային արժեքները:

Հմտությունները

Դասավանդողը պետք է՝

- առաջնորդվի ՀՀ կրթական և լեզվական քաղաքականությամբ, դասավանդման բոլոր մակարդակների համար նախատեսված կրթական ծրագրերով,
- գործի որպես միջմշակութային արժեքների կրող:

Վերջին տարիներին նախատեսատեսացիոն վերապատրաստումներին մասնակցած բոլոր ուսուցիչները ծանոթ են այս փաստաթղթին, ունեն իրենց թղթապանակներում, բայց որքանո՞վ են առաջնորդվում դրանով, դժվար է ասել: Փաստաթղթի կարևոր գաղափարներից մեկը ուսուցչի ինքնակրթության գաղափարն է, որն իր արտահայտությունն է գտել նաև հերթական ատեստավորման ենթակա ֆրանսերենի ուսուցիչների մասնագիտական զարգացման վերապատրաստման դասընթացի ծրագրում (ինքնուրույն աշխատանքներ և ավարտական հետազոտական աշխատանք): Ուսուցչի ինքնակրթությունը, որն ուսուցչի շարունակական կրթության անքակտելի և ամենակարևոր բաղադրիչներից մեկն է, մեր օրերում երկրորդ պլան է մղվել: Չընդհանրացնելով պետք է ասել, որ ուսուցիչների մի զգալի մասը, քիչ է աշխատում իր մասնագիտական որակների կատարելագործման ուղղությամբ, համապատասխան վերլուծություններ չի կատարում իր հետագա աշխատանքը բարելավելու նպատակով և այլն: Կարելի է թվարկումը շարունակել, սակայն մեր նպատակը ոչ միայն թերությունները նշելն է, այլև դրանք ուղղելու ուղիներ փնտրելը:

Անընդհատ փոփոխվող աշխարհում աշխատանքի նկատմամբ մոտեցումները չեն կարող նույնը մնալ: Այսօր յուրաքանչյուր ոք, ցանկության դեպքում, ունի հսկայական հնարավորություն՝ տեղեկացված լինելու համար: Բնականաբար, տեղեկատվություն փնտրելը, գտնելը, համակարգելը ժամանակատար և աշխատատար գործընթաց է, բայց լավագույն միջոցն է մասնագիտական որակները կատարելագործելու համար: Ուսուցիչն իրագործում է բարդ եւ բազմակողմանի աշխատանք, որի հաջողությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի թե՛ անձնային, թե՛ մասնագիտական որակներով:

Ինքնակրթությունը մի գործընթաց է, որը կազմակերպում, վերահսկում և կարգավորում է անհատը: Ինքնակրթությունը միջոց է մասնագիտական և առարկայական խոր և կայուն գիտելիքներ, հոգեբանամանկավարժական և մեթոդական պատրաստվածության բավարար մակարդակ, բարձր զարգացած ընդհանուր կուլտուրա, ստեղծագործական մանկավարժական կարողություններ և ընդունակություններ ունենալու համար: Մշտապես հետաքրքրված լինե-

լով մասնագիտական դաշտի նորություններով, գործընկերների առաջավոր փորձով, տեղյակ լինելով ուսուցման և ուսումնառության բնագավառում տեղի ունեցող փոփոխությունների մասին՝ ուսուցիչն անընդհատ բարելավում է իր աշխատանքը:

Սովորողները սիրում և հետաքրքրվում են այն ուսումնական առարկաներով, որոնց դասաժամերը չեն սահմանափակվում դասագրքով, մշտապես հագեցած են նոր տեղեկատվությամբ, կազմակերպվում են ակտիվ մեթոդներով: Նրանք իրենք են իրենց ուսումնառության գլխավոր դերակատարները: Ուսուցիչն առաջնորդող է, օգնող, խորհրդատու, երբեմն նաև գործընկեր:

Ուսուցիչները հաճախ դժգոհում են, որ իրենց ներկայացվող պահանջները խիստ են, դրանք իրագործելու հնարավորությունները քիչ: Սակայն եթե առաջնորդվելու լինենք չինացի մեծ մտածող Կոնֆուցիոսի փիլիսոփայությամբ՝ «**Եթե ակնհայտ է, որ նպատակներին հասնել չի լինում, ոչ թե ուղղեք նպատակները, այլ գործողությունները**»: Փոխելով մեր մոտեցումները մեր աշխատանքի նկատմամբ, կարող ենք հասնել գոհացուցիչ արդյունքների: Օտար լեզուների ուսուցման հիմնախնդիրների, այդ բնագավառում նոր մոտեցումների, ուսուցման ժամանակակից մեթոդների մասին մշտապես տեղեկացված լինելը մասնագիտական առաջընթացի լուրջ գրավականներ կարող են լինել:

«Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ» փաստաթղթում, որն առնչվում է լեզվի կիրառության և ուսումնառության ամենաընդհանուր տեսակետներին, օտար լեզուների ուսուցման բնագավառում որդեգրված է «Գործունեության վրա հիմնված մոտեցումը»: Ըստ այդ մոտեցման՝ լեզուն կիրառողներն ու սովորողները դիտարկվում են նախ և առաջ որպես հանրության անդամներ, որոնք որոշակի հանգամանքներում, որոշակի միջավայրում և գործունեության որոշակի ոլորտներում որոշակի (ոչ միայն սուկ լեզվին առնչվող) խնդիրներ են լուծում: Խոսքն իրագործվում է լեզվական գործունեության ընթացքում, որն ընդհանուր սոցիալական համատեքստի մի մասն է: Ուստի միայն այդ համատեքստը կարող է խոսքին լիարժեք իմաստ հաղորդել:

Գործունեության վրա հիմնված մոտեցումը հաշվի է առնում նաև անհատի իմացական, հուզական ու կամային հնարավորությունները:

Ըստ նշված փաստաթղթում ընդունված մոտեցման՝ անհատը տրված նպատակին հասնելու համար որոշակի գործողություններ է կատարում՝ ճիշտ կիրառելով իրեն յուրահատուկ լեզվական և սոցիալական կարողությունները:

Եթե այս մոտեցման փիլիսոփայությունն արտահայտելու լինենք դարձյալ չինացի մեծ փիլիսոփայի խոսքերով, ապա այն կհնչի այսպես. «**Ասա ինձ, և ես կմոռանամ, ցույց տուր ինձ, և ես կհիշեմ, ներգրավիր ինձ, և ես կսովորեմ**»:

Եթե խոսելու լինենք դասապրոցեսի մասին, ապա այն պետք է կազմակերպել, պլանավորել և կառուցել այնպես, որ ոչ թե ուսուցիչն իր իմացածը մատուցի որպես պատրաստի գիտելիք, այլ կարողանա ապահովել համապատասխան աշխատանքային պայմանների և մթնոլորտի առկայություն, որպեսզի սովորողը իր սեփական աշխատանքի և փորձառության միջոցով հասնի գիտելիքի ձեռքբերմանը, և իր «ինչունների» պատասխաններն ինքը փնտրի, կարողանա

բացատրություններ գտնել սեփական անհաջողությունների և հաջողությունների համար: Օտար լեզուների ուսուցումն այս առումով բախվում է սովորածը գործնականում կիրառելու խնդրին: Ուսուցչի հմտությունն այն է, որ կարողանա ստեղծել հաղորդակցական այնպիսի իրավիճակներ, որտեղ սովորողը կկարողանա կիրառել իր ձեռք բերած գիտելիքը: Այսինքն, պետք է սովորողին դնել այնպիսի իրավիճակում, որ նա ասի այն, ինչ անում է և անի այն, ինչ ասում է: Պետք է խոստովանել, որ ստացած գիտելիքը գործնականում կիրառելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը (լսելով հասկանալ, կարդալով հասկանալ, բանավոր խոսք, գրավոր խոսք կամ կապակցված խոսք կազմելը) մնում է մեր աշխատանքի կարևոր խնդիրներից մեկը: Խոսքային գործունեության որ տեսակի վրա էլ աշխատելիս լինենք, միշտ պետք է հիշել, որ ***նպատակը սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն է:***

Հանրակրթական դպրոցի ֆրանսերենի չափորոշչի «Ուսումնական գործունեության տեսակները» բաժնում կարելի է գտնել ուսումնական գործունեության տարբեր տեսակների նկարագրություններ, որոնք կարող են նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Նպատակաուղղված և արդյունավետ աշխատանք կազմակերպելու համար խորհուրդ ենք տալիս, որ դասը նախապատրաստելիս յուրաքանչյուր ուսուցիչ մտովի իրեն տա հետևյալ հարցերը.

- Իմ ընտրած նպատակը կամ նպատակները համապատասխանում և՛ են արդյոք չափորոշչային պահանջներին:

- Որքանո՞վ են դրանք իրագործելի մեկ դասաժամի սահմաններում:

- Իմ ընտրած ուսումնական գործունեության տեսակները, առաջադրանքները, մեթոդները, հնարները հնարավորություն կտա՞ն հասնելու իմ նախանշած նպատակին կամ նպատակներին:

- Ի՞նչ է հարկավոր ինձ դասը հետաքրքիր և նպատակային կազմակերպելու համար:

- Ի՞նչ պետք է անեմ ես:

- Ի՞նչ պետք է անեն սովորողները:

- Գնահատման ինչպիսի՞ ձևեր են օգտագործելու:

Շատ կարևոր է մշտապես պահպանել հետադարձ կապը և կատարած աշխատանքը վերլուծելիս անպայման արձանագրել, թե ի՞նչը ստացվեց և ինչպե՞ս, ի՞նչը չստացվեց և ինչո՞ւ, ինչպիսի՞ աշխատանքներ պետք է կատարել այդ ուղղությամբ, ի՞նչը փոխել պլանավորման և դասի կազմակերպման քայլերի մեջ և այլն:

ՀՀ ԿԳ նախարարության կողմից 2016-2017 ուստարում հանրակրթական դպրոցում գործածության են երաշխավորվել ֆրանսերենի հետևյալ դասագրքերը.

3-րդ դասարան- Bon voyage -1, Կ. Ամիրյան, «Մանմար», 2015:

4-րդ դասարան- Bon voyage -2, Կ.Ամիրյան, «Մանմար», 2016:

5-րդ դասարան- Français-5, Ա. Կուլիզինա, «Անտարես», 2014:

6-րդ դասարան- Français-6, Ն.Սելիվանովա, Ա. Շաշուրինա, «Անտարես», 2015:

7-րդ դասարան -Français-7, Ն.Սելիվանովա, Ե. Բերեգովսկայա, «Անտարես», 2014:

8-րդ դասարան -Français-8, Ն. Սելիվանովա, Ե.Բերեգովսկայա, «Անտարես», 2015:

9-րդ դասարան - Français-9, Ն. Սելիվանովա, Ե. Բերեգովսկայա, «Անտարես», 2016:

10-րդ դասարան -Français-10, Վ.Ստեփանյան, «Մանմար», 2010:

11-րդ դասարան–Français-11,Վ.Ստեփանյան, «Մանմար», 2010:

12-րդ դասարան -Français-12, Վ.Ստեփանյան, «Մանմար», 2011:

Առանց փոփոխությունների վերահրատարակվել են 4-րդ դասարանի և որոշ փոփոխություններով՝ 9-րդ դասարանի դասագրքերը: 9-րդ դասարանի դասագրքի հետ կա նաև խտասկավառակ՝ ունկնդրման համար նախատեսված նյութերով: Խտասկավառակում ընդգրկված նյութը կարելի է գտնել նաև՝ այցելելով Կրթության ազգային ինստիտուտի www.aniedu.am կայք էջի հանրակրթություն. մեթոդական նյութեր բաժնում:

Ձեռնիքի ա Ավետիսյան

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

2016թ. ԿԱԻ գերմաներենի մասնախումբն նոր ծրագրով իրականացրեց գերմաներենի ուսուցիչների 120-ժամյա վերապատրաստման դասընթացները: Այս վերապատրաստումն առանձնահատուկ էր նրանով, որ ուսուցչին հնարավորություն ընձեռեց առավել ինքնուրույն, ստեղծագործ մոտեցում որդեգրել իր հետագա մանկավարժական գործունեության ընթացքում:

Գործնական ուղղվածություն ունեցող այս դասընթացները կօգնեն ուսուցիչներին՝ մասնագիտական գործունեություն իրականացնելիս կատարել վերլուծություններ, յուրացնել դասավանդման նոր մեթոդների առանձնահատկությունները և գործընկերների առաջավոր փորձը: Դրանք միտված են օժանդակելու գերմաներենի ուսուցիչներին՝ իրենց մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակը բարձրացնելու, շարունակական մասնագիտական զարգացում ապահովելու և որակավորման տարակարգերի հավակնելու գործընթացներում:

Գերմաներեն առարկայի դասավանդման մեթոդական հարցեր

Արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը: Սա ենթադրում է նյութին մանրամասն ծանոթանալը և դասի ողջ ընթացքը պատկերացնելը: Թերևս ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է. ո՞ւր ենք ուզում հասնել, ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցներով:

Նպատակային և արդյունավետ համարվում է այն դասը, որը նախապես պլանավորված է, և պլանում տեսանելի է, թե սովորողը դասի ո՞ր փուլում ի՞նչ կարող է անել, և ինչպես կարող են նրան աջակցել դասընկերներն ու ուսուցիչը:

Չպետք է մոռանալ, որ համադասարանցիները շատ կարևոր դերակատարում ունեն դասընկերներին աջակցելու հարցում:

Դասը կազմվում է հետևյալ հաջորդականությամբ.

- Հստակեցվում է ուսուցանվող նյութի կառուցվածքը, բովանդակությունը:

- Իրականացվում են գործողություններ, որոնք արտացոլում են յուրաքանչյուր սովորողի և դասարանի պահանջները:

Հաճախ սովորողի կրթության ճիշտ կազմակերպման նպատակով իրականացվում է թիմային աշխատանք, ներառվում են տարբեր օղակներ, օգտագործվում են բոլոր ջանքերը, բայց գրեթե մոռացվում է այդ օղակի ամենակարևոր անձի՝ սովորողի կարծիքն իր կրթության կազմակերպման վերաբերյալ: Չպետք է անտեսել ինքնագնահատման դերը սովորողի գնահատման գործընթացում: Այն չափազանց կարևոր է սովորողի ուսումնական գործունեությունը խթանելու համար:

1. Ուսուցիչը դասը պլանավորում է յուրաքանչյուր սովորողի համար:

2. Յուրաքանչյուր սովորող պետք է դասին ունենա լիարժեք մասնակցություն:

3. Ուսուցիչը կրթության հիմնական պատասխանատուն է:

4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի դասի պլանավորումը պետք է ներառվի դասարանի ընդհանուր դասի պլանում:

Մեթոդական ցուցումներ

Խորհուրդ է տրվում երրորդ դասարանում գերմաներենի ուսուցումը կազմակերպել նախաայբբենական շրջանի բանավոր մի շարք թեմաների ուսուցմամբ՝ աշակերտների տարրական հաղորդակցական կարողությունների ձևավորման նպատակով: Հանրակրթական դպրոցի պետական չափորոշչով և ծրագրով, սովյալ կարողությունների զարգացման նպատակով, նախատեսվում է 10-12 ժամ: Նշված ժամերն ըստ անհրաժեշտության կարող են ավելացվել ուսուցչի կողմից: Ուսուցման այս փուլում ներմուծվում են հաղորդակցական ամենատարրական խոսքային նմուշներ, փոքրածավալ բառապաշար, ինչպես նաև տառեր (յուրաքանչյուր դասին՝ 3 տառ, միայն բանավոր ուսուցմամբ) նախաայբբենական շրջանում նախատեսվող թեմաների դասավանդումն ապահովելու համար: Այդ շրջանում աշակերտներին կարելի է սովորեցնել կարճ ոտանավորներ, խաղեր, երգեր, զանազան խոսքային նմուշներ՝ հաղորդակցական հմտություններ ձևավորելու նպատակով:

Առաջարկվում է 3-րդ դասարանում թեմատիկ գրավոր աշխատանք անցկացնել միայն 2-րդ կիսամյակում: Այդ ընթացքում անցկացվում է միայն մեկ թեմատիկ գրավոր աշխատանք, իսկ կիսամյակի վերջում՝ կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք: Առաջին կիսամյակի համար նախատեսված են մարզողական-ուսուցողական գրավոր աշխատանքներ՝ աշխատանքային տեքստերում: 4-րդ և 5-րդ դասարաններում գրավոր աշխատանքներ տրվում են հենց առաջին կիսամյակից՝ 2 թեմատիկ և 1 կիսամյակային: Ավագ դպրոցում թեմատիկ գրավոր աշխատանքների քանակի և գնահատման համակարգի վերաբերյալ տեղեկատվություն կարող էք ստանալ «2016-2017 ուստարվա հանրա-

կրթական դպրոցների գնահատման համակարգի վերաբերյալ մեթոդական ցուցումներում»:

Անհրաժեշտ ենք համարում մեկ անգամ ևս ուսուցիչներին հիշեցնել, որ 4-11-րդ դասարաններում, որպես թեմատիկ գրավոր աշխատանք, բացի թեստային առաջադրանքներից՝ կարող են նաև տրվել թելադրություններ, փոխադրություններ և շարադրություններ:

Գերմաներեն առարկայից սովորողների ուսումնասության արդյունքների գնահատման մոտեցումներ

2016-2017 ուսումնական տարում գերմաներենից սովորողների գիտելիքների գնահատման գործընթացն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել «Մեթոդական ցուցումներ՝ 2016-2017 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ» փաստաթղթով: Սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման խնդիրների բացահայտման նպատակով անհրաժեշտ է աստիճանաբար ընդլայնել ուսուցանող գնահատման տարբեր ձևերի կիրառումը: Վերջինիս համար արդյունավետ են հայտորոշիչ թեստերի, բաց հարցերով բանավոր հարցադրումների, կարճ պատասխաններ ակնկալող գրավոր առաջադրանքների կիրառումը:

Ծրագրեր

2016-2017 ուստարում գերմաներեն առարկայի ուսուցումը միջին /բեռնաթափված տարբեակը տեղակայված է ԿԱԻ ինտերնետային կայքում/ և ավագ դպրոցներում կկազմակերպվի գործող 12-ամյա դպրոցի /Երևան, 2007 «Գերմաներեն» առարկայի չափորոշիչներով ու ծրագրերով:

Երրորդ օտար լեզուն դասավանդվելու է երկրորդ օտար լեզվի գործող ծրագրերի և դասագրքերի շրջանակում, գրեթե նույն թեմատիկայով և նույն չափորոշչային պահանջներով՝ զարգացնել սովորողների հաղորդակցական կարողությունները: ԿԱԻ և ԿԳ նախարարության կայքերում տեղակայված են գերմաներենի՝ որպես երրորդ օտար լեզվի, 5-9-րդ դասարանների ծրագրերն ու չափորոշիչները:

Գերմաներենը որպես երրորդ օտար լեզու ներկայացված է համապատասխանաբար շաբաթական 1,5 և 2 ժամանոց ծրագրերով:

Այսպիսով, գերմաներենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցմամբ, շաբաթական 2-ժամյա ծրագրով աշխատող դպրոցներում միավորային գնահատումն իրականացվում է երկրորդ օտար լեզվի գնահատման կարգով, իսկ շաբաթական 1,5-ժամյա ծրագիր իրականացնող դպրոցների համար տրված են մեթոդական ցուցումներ, որոնց համաձայն կիրականացվի գնահատում:

Դասագրքեր

Նոր ուսումնական տարում հանրակրթական դպրոցներում գործածության են երաշխավորված հետևյալ դասագրքերը.

3-րդ դասարան- Գերմաներեն, Մ. Աստվածատրյան, «Մանմար», 2015:

4-րդ դասարան- Գերմաներեն, Մ. Աստվածատրյան, «Մանմար», 2016:

5-րդ դասարան – Գերմաներեն, Բիմ Ի.Լ., «Անտարես», 2014:

6-րդ դասարան – Գերմաներեն, Բիմ Ի.Լ., «Անտարես», 2015:

7-րդ դասարան – Գերմաներեն, Բիմ Ի.Լ., «Անտարես», 2014:

8-րդ դասարան- Գերմաներեն, Բիմ Ի.Լ., «Անտարես», 2015:

9-րդ դասարան- Գերմաներեն, Բիմ Ի.Լ., «Անտարես», 2016:

10-րդ դասարան- Գերմաներեն, Կ. Հովհաննիսյան, «Զանգակ», 2010:

11-րդ դասարան- Գերմաներեն, Կ. Հովհաննիսյան, «Զանգակ», 2010:

12-րդ դասարան- Գերմաներեն, Կ. Հովհաննիսյան, «Զանգակ», 2011:

Հարկ է նշել, որ գերմաներենի ուսուցման գործընթացում կարևորվում է լրացուցիչ ուսումնական նյութերի /արձակ և չափածո գեղարվեստական գրականությունից հատվածներ, թերթերի, ամսագրերի հոդվածներ, ֆիլմեր, էլեկտրոնային դասեր/ կիրառությունը: Սակայն դրանց ընտրությունը ուսուցչից պահանջում է չափորոշչային և ծրագրային պահանջների հստակ իմացություն և առավելագույն ուշադրություն, որպեսզի կարողանա դրանք համապատասխանեցնել սովորողների տարիքային առանձնահատկություններին և հետաքրքրություններին:

Ուսուցչի մեթոդական ձեռնարկներ

1. Ձեռնարկ, 5-6-րդ դասարանների գերմաներենի ուսուցիչների հանար, Ն.Անթառանյան, «Անտարես», 2014:

2. Ձեռնարկ, 7-9-րդ դասարանների գերմաներենի ուսուցիչների հանար, Ն.Անթառանյան, «Անտարես», 2015:

3. Ձեռնարկ, 10-12-րդ դասարանների գերմաներենի ուսուցիչների համար, Կ. Հովհաննիսյան, «Զանգակ», 2010

***Մաթենիկ Հայթյան
Տատյանա Միքայելյան***

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՄԱՅՐԵՆԻ

Ընթացիկ ուսումնական տարում նորույթներ չկան տարրական դասարանների չափորոշիչների, ծրագրերի բովանդակության հարցում, քանի որ շարունակվում է գործածության մեջ մնալ վերոնշյալ նորմատիվ փաստաթղթերի հաստատման վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2011թ. օգոստոսի 29-ի՝ № 1000-Ա/Ք հրամանը:

Համաձայն ընդունված կարգի՝ դասագրքերի գործածության երեք տարին լրանալու կապակցությամբ, լայնածավալ քննարկումներ են կազմակերպվում՝ ուսուցիչների առաջարկություններն ու դիտարկումները լսելու և վերահրատարակումից առաջ դասագրքերը բարեփոխելու նպատակով: Այս ուսումնական տարվա ընթացքում ևս որոշ փոփոխությունների են ենթարկվել և վերահրատարակման ենթակա են «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների երկրորդ և չորրորդ դասարանների դասագրքերը:

2016-2017 ուսումնական տարում նպատակահարմար կլինի ուշադրությունը սևեռել ուսուցիչների մեթոդական աշխատանքի արդյունավետության բարձրացման խնդիրներին: Դրանք են՝

- Կրթության որակի բարձրացումը,
- Ուսուցչի մասնագիտական վարպետության և ինքնակրթության կատարելագործումը,
- Ուսումնական առարկաների դասավանդման գործնական ուղղվածության արդյունավետ փորձի տարածումը:

Մեթոդական նոր հնարներ կիրարկելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ուսումնական առարկաների դասավանդման արդյունավետության ապահովման ուղիներին, ուսուցման բազմազան միջոցների, մեթոդների և ձևերի օգտագործման նպատակահարմարությանն ու աշակերտների ուսումնական ակտիվ գործունեության կազմակերպմանը՝ նրանց անհատական հնարավորությունների, նախասիրությունների հաշվառմամբ:

Ուսուցչի մասնագիտական զարգացումը մշտապես համարվել է մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևորագույն նախապայմաններից մեկը: Տարեցտարի հիշյալ խնդիրն առավել արդիական հնչեղություն է ստանում՝ կապված ուսուցչի որակավորման տարակարգեր շնորհելու հարցի հետ: Հայտնի է, որ այդ առնչությամբ ԿԱԻ-ի մասնագետները հսկայածավալ աշխատանք են կատարում՝ ուսուցչին ատեստավորման գործընթացին նախապատրաստելու ուղղությամբ. կազմակերպվում են վերապատրաստման հատուկ դասընթացներ, կլոբ սեղաններ, սեմինար պարապմունքներ և, ի վերջո, դասընթացի հետքերով մոնիթորինգի աշխատանքներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում ուրվագծվել է հարցերի այն շրջանակը, որի կապակցությամբ ուսուցիչները մեթոդական օգնության կարիք ունեն: Այդ է պատճառը, որ այս ուստարվա մեթոդական նամակի բովանդակու-

թյունը որոշեցինք նպատակաուղղել այն հարցերի մեկնաբանմանը, որոնք, մեր կարծիքով, առավել խոցելի են ուսուցիչների դասավանդման գործընթացում :

1. Պատմելու կամ բովանդակության վերարտադրման ուսուցումը տարրական դասարանների մայրենիի ժամերին

ա) Իրավիճակի նկարագրությունը ըստ դասալսումների:

Ուսուցիչների մեծ մասը չի աշխատում աշակերտների մեջ տեքստի բովանդակության վերարտադրության կարողության ձևավորման ուղղությամբ: Հաճախ դասի վերջում՝ զանգից քիչ առաջ, անգամ դասամիջոցին, կարելի է լսել այսպիսի հանձնարարություն. «Տանը դասը կտվորեք պատմել»: Անմիջապես հարց է ծագում՝ ինչպե՞ս, ո՞վ պետք է սովորեցնի կամ արդյո՞ք նա ցանկանում կամ հասկանում է դրա անհրաժեշտությունը: Արդյունքում՝ երեխան դպրոց է գալիս անպատրաստ, առավել պարտաճանաչները՝ տեքստն անգիր արած: Վիճակն ավելի մտահոգիչ է, եթե խոսենք պատմելու տարբեր ձևերի ուսուցման մասին, որոնց տարբերակման և համապատասխան նախապատրաստական աշխատանքներ վարելու պրակտիկան առայժմ խնդիր է մեր ուսուցիչների աշխատատեղում: Նման մոտեցման դեպքում հասկանալի է երեխաների աղքատիկ բառապաշարը, կապակցված խոսք կազմելու դժվարությունը, ինքնարտահայտման անկարողությունը և մի շարք այլ անցանկալի հետևանքներ:

բ) Հիշեցում ուսուցչին

Մեթոդիկայում ընդունված է *վերարտադրել* անվանել գեղարվեստական ստեղծագործության բովանդակության բանավոր փոխադրումը: Կրտսեր դպրոցականների ուսուցման հարցում դժվար է գերազնահատել վերարտադրելու գործընթացի դերը: Տարրական դպրոցի բոլոր չորս տարիների համար էլ վերարտադրումը համարվում է գեղարվեստական տեքստի շուրջ տարվող աշխատանքներից ամենակարևորը: Եվ դա պատահական չէ, քանի որ կրտսեր դպրոցական տարիքում վերարտադրումը համարվում է մենախոսական խոսք կազմելու առաջին փորձը: Հեղինակային տեքստի շնորհիվ երեխան կարողանում է գիտակցված խոսել կարդացածի թեմայի մասին, հաղորդել շարադրանքի տրամաբանությունը, բացահայտել հանգույցը, բնութագրել գործող անձանց, նկարագրել բնության տեսարանները և այլն: Աշակերտների ուսումնական գործունեության կազմակերպման հարցում հնարավոր կադապարից խուսափելու համար նպատակահարմար է կիրառել պատմելու տարբեր ձևեր, որոնք հնարավորություն կստեղծեն բովանդակության փոխադրման եղանակների մեջ տարբերակում մտցնելու և դրանով խթանելու աշակերտների ստեղծագործական կարողությունների ակտիվացման գործը:

Տեքստի շուրջ տարվող աշխատանքների շարքում պատմելը կարևորվում է նաև դաստիարակչական առումով: Բովանդակությունը վերարտադրող աշակերտն իր առաջադրանքը այն դեպքում ճիշտ կկատարի, երբ ոչ միայն մանրամասն կվերարտադրի կարդացածը, այլև կկարողանա իր վերաբերմունքն

արտահայտել կարդացածի մասին: Այսպիսով, վերարտադրումը անհրաժեշտաբար թելադրում է տեքստի գաղափարի ընկալում, հերոսների արարքների դրդապատճառների մեկնաբանում: Վերջնարդյունքում այս ամենը աշակերտին օգնում է գիտակցել շարադրանքի բարոյական կողմը և ձևավորել անհրաժեշտ բարոյական համոզմունքներ: Վերարտադրումը օգնում է նաև գեղագիտական զգացումների ձևավորմանը, աշակերտի գեղագիտական ճաշակի զարգացմանը:

Տարրական դպրոցի պրակտիկայում կուտակված է բովանդակության վերարտադրության ձևերի մեծ բազմազանություն: Դիտարկումները ցույց են տալիս, որ ուսուցիչների պրակտիկայում առավել գործածական են տեքստի բովանդակության վերարտադրման հետևյալ տեսակները՝ ընդարձակ, համառոտ և ստեղծագործաբար:

- **Մանրամասն կամ բնագրին հարազատ վերարտադրում (ընդարձակ)**

Պատմելու այս տեսակը ենթադրում է կարդացած տեքստի բովանդակության ամբողջական վերարտադրում՝ շարադրանքի բոլոր մանրամասների պահպանմամբ՝ հարազատ մնալով հեղինակային խոսքի ոճին և բառապաշարին:

Մանրամասն պատմելու աշխատանքները ուսուցիչները հիմնականում ճիշտ են կազմակերպում՝ պահպանելով այդ գործընթացի մեթոդական շղթայի բոլոր քայլերը (հասկանալով կարդալ, առանձնացնել հենակետային բառերը, տեքստը բաժանել տրամաբանական ամբողջություն ունեցող հատվածների և վերնագրել դրանք՝ պատմելու հարցաշար կազմելու նպատակով, աշխատանք տանել նախ՝ հարցաշարի առանձին հարցերի շուրջ, ապա՝ ամբողջ նյութի):

Պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյանը խորհուրդ է տալիս կարդացածը վերարտադրելիս կարևորել հետևյալ հարցերը.

ա) Բնագրի բովանդակությունն ամբողջությամբ պատմվե՞ց, ի՞նչ կամ ո՞ր հատվածն է վրիպել ուշադրությունից:

բ) Ճի՞շտ վերարտադրվեց ամեն ինչ, անճշտություններ չկա՞ն, ինչպե՞ս են օգտագործել հենակետային կամ նորածանոթ բառերը:

գ) Դեպքերի հաջորդականությունը պահպանվե՞լ է, չկա՞ն կրկնություններ, մտքերի տրամաբանական խախտումներ:

դ) Բերվե՞լ են արդյոք հիմնավորումներ պարունակող օրինակներ, փաստեր, առանձնացվել են համապատասխան հատվածները: Կարողանո՞ւմ է ասելիքը հիմնավորել դիպուկ ընտրված բառերով կամ արտահայտություններով:

ե) Կատարվե՞լ են բացատրություններ, մեկնաբանություններ, որքանո՞վ են դրանք ճշգրիտ և հասկանալի:

- **Համառոտ պատմելու ուսուցումը**

Հայտնի է, որ տեքստի բովանդակությունը կարելի է վերարտադրել և՛ ընդարձակ, և՛ համառոտ ձևով: Համառոտ վերարտադրության ժամանակ թեման բացահայտվում է հիմնական գծերով, կարևոր իրադարձությունների մեջբերմամբ: Պատմելու այս տեսակը որոշակի դժվարություն է ներկայացնում կրտսեր դպրոցականի համար, քանի որ անհրաժեշտություն է զգացվում բովանդակությունից ընտրել կարևորագույնը, բացառել երկրորդական մանրա-

մասները: Սովորողն ինքնուրույն պետք է կարողանա որոշել՝ տեքստում ինչը կարևորել, ինչը բաց թողնել: Ընտրություն կատարելուց հետո առաջ է գալիս մի դժվարություն ևս. ինչպե՞ս դա ներկայացնել կապակցված, անշեղ խոսքով՝ չխախտելով շարադրանքի տրամաբանությունը: Բնական է՝ տեքստը համառոտելու աշխատանքը մեխանիկորեն չի կատարվում՝ մի քանի նախադասություններ կամ պարբերություններ կրճատելու միջոցով: Հակառակ դեպքում՝ կունենանք ոչ տրամաբանական խզումներ կամ բացթողումներ:

Ըստ բովանդակության վերարտադրության ծավալի՝ համառոտ պատմելը կարող է լինել ամբողջական (լրիվ) կամ մասնակի: Մասնակի վերարտադրության ժամանակ համառոտ պատմում է մեկ աշակերտ, իսկ ամբողջականի դեպքում պատմելու գործընթացին ակտիվորեն մասնակցում է ամբողջ դասարանը՝ շարունակելով միմյանց:

Բովանդակության մասնակի վերարտադրում իրականացվում է՝

- տեքստը երկրորդ անգամ ընթերցելիս՝ առանձին հատվածների կապակցությամբ,
- երբեմն առանձին հատվածներ միավորելու նպատակով, երբ հարցաշար (պլան) կազմելու անհրաժեշտություն կա,
- կոնկրետ հարցերի պատասխանելիս, երբ ծավալուն պատասխանի կարիք է զգացվում,
- մի իրադարձության մասին պատմելը, երբ անհրաժեշտություն կա գնահատելու կամ եզրահանգում կատարելու:

Մասնակի վերարտադրումը շատ կիրառելի է թեմայի ամփոփման ժամանակ, երբ աշակերտները յուրաքանչյուր հարցի կապակցությամբ տալիս են ընտրովի պատասխան:

Տեքստը համառոտ վերարտադրելու ուսուցումը կազմակերպվում է երկու հիմնական եղանակներով:

Առաջին՝

1. Պատմողն առաջնորդվում է պլանով կամ պատասխանում է համառոտ շարադրանք պահանջող հարցերի :

2. Պահանջվում է նկարաշարի բովանդակության յուրաքանչյուր նկարի վերաբերյալ կազմել 1-2 նախադասություն (I դասարան):

3. II-III դասարաններում համառոտ պատմել ուսուցանվում է հետևյալ կերպ.

- Որոշվում է պատմվածքի գլխավոր միտքը:
- Կազմվում է պլան:
- Քննարկվում է, թե պլանի յուրաքանչյուր հարցի կապակցությամբ ինչ մտքեր կարելի է ներկայացնել:
- Պլանի յուրաքանչյուր հարցի պատասխանը կազմվում է 2-3 նախադասություններով:

Պլանի միջոցով պատմելու նախապատրաստումը կլիթանի աշակերտների կողմից՝ նյութի գիտակցված ընկալումն ու հետաքրքրասիրությունը և կբարելավի պատմելու որակը:

Ուսուցանվող նյութի բովանդակության համառոտ վերարտադրության ուսուցման **երկրորդ եղանակը** տեքստի շուրջ աշխատանքի այն ձևն է, երբ ընտրվում է ամենագլխավորը: Պատմվածքի հատվածաբար ընթերցումից հետո առանձին հատվածներից ընտրվում են այն նախադասությունները, որոնք արտահայտում են հիմնական միտքը: Եթե տեքստում բառացիորեն նույն նախադասությունը չկա, երեխաներն իրենք են կազմում մտքին համապատասխան նախադասություն: Այս ձևով կամաց-կամաց, քայլ առ քայլ «հունցվում» է տեքստի համառոտ շարադրանքը:

Պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր տեքստերի կապակցությամբ կարելի է բովանդակությունը համառոտել: Խորհուրդ չի տրվում համառոտել այն տեքստերը, որոնք հիմնված են երկխոսությունների վրա: Դա ավելի հարմար է կատարել ճանաչողական տեքստերի առնչությամբ, որտեղ հեշտ է հետևել դեպքերի ընթացքին:

● **Ստեղծագործաբար պատմելու ուսուցումը**

Մայրենիի ժամերին ստեղծագործական գործունեության տեսակներից մեկը ուսումնասիրվող տեքստի ստեղծագործաբար պատմելու ուսուցման գործընթացն է: Պատմելու վերոհիշյալ ձևերի առնչությամբ պարզ դարձավ, որ բովանդակության վերարտադրումը կարդացածի բանավոր փոխադրումն է՝ կապակցված և հաջորդականություն պահանջող խոսքով: Ստեղծագործաբար պատմելը աշակերտի առջև խնդիր է դնում կարդացածի բովանդակությունը վերարտադրելիս որոշակի փոփոխություններ ներմուծել:

Ստեղծագործաբար պատմելու էությունը աշակերտի կողմից տեքստի ինքնօրինակ փոխակերպումն է: Մայրենիի ժամերին գործունեության այս տեսակը ոչ միայն ընդլայնում է աշակերտների հետաքրքրությունների շրջանակը ուսումնասիրվող ստեղծագործության նկատմամբ և ավելի կենդանի է դարձնում դասի մթնոլորտը, այլև իրականացնում է մի շարք մեթոդական խնդիրներ.

✓ նպաստում է կարդացածի հանդեպ վերաբերմունքի մշակմանը,

✓ աշակերտների մեջ հուզական արձագանք է առաջացնում տեքստի նկատմամբ, օգնում է ավելի խորությամբ ընկալելու ստեղծագործության գաղափարը,

✓ նպաստում է կարդացածի նկատմամբ վերաբերմունքի արտահայտմանը,

✓ մարզում է ընթերցողական հայացքի ճկունությունը, սովորեցնում է հասկանալ տարբեր հերոսների դիրքորոշումն ու մեկնաբանել վարքագիծը:

Ստեղծագործաբար պատմելու նախապատրաստումն ու իրականացումը նպաստում են նաև տեքստի ոճական և լեզվական հարցերի նկատմամբ հետաքրքրության աճին, ինչն էլ, իր հերթին, բարենպաստ պայման է ստեղծում աշակերտների խոսքի զարգացման համար:

Տեքստի ստեղծագործական վերարտադրման յուրաքանչյուր կոնկրետ խնդրի լուծման համար գոյություն ունեն առանձնահատուկ և բազմազան առաջադրանքներ: Դրանք են՝ պատմել տեքստը՝ ստեղծագործաբար փոխակերպելով այն և լրացնելով այլ մանրամասներով, պատմել՝ փոխելով պատմողի դեմքը (իբրև մասնակից, ակնատես), պատմել՝ ներմուծելով բառային նկարչություն և երևակայելով նյութի էկրանավորումը, բովանդակության մեջ նոր

պատկերների, փաստերի, գործող անձանց ներմուծում, ինչպես նաև բեմակա-
նացում, թատերականացված դերակատարումներ, նկարագարդումներ և այլն:

2. Ինքնակրթությունը որպես մանկավարժի մասնագիտական գործունեու- թյան անհրաժեշտ նախապայման

*ա) Իրավիճակի նկարագրություն՝ ըստ վերապատրաստման դասընթացի
նոր ձևաչափի և մշտադիտարկման արդյունքների:*

*Հասարակությունը միշտ էլ ուսուցչին առաջադրել և առաջադրելու է ամե-
նաբարձր պահանջներ: Ուսումնադաստիարակչական աշխատանքների որա-
կի կատարելագործումը դպրոցում ուղղակիորեն կախված է ուսուցչի պատ-
րաստվածության մակարդակից: Մանկավարժի մասնագիտական զարգացման
անհրաժեշտ նախապայման է ինքնակրթությունը:*

*Հարց է ծագում. ինչպիսի՞ն է իրավիճակը դպրոցներում. ինչքանո՞վ են
ուսուցիչները զբաղվում ինքնակրթությամբ, իրենց մասնագիտական աճի պա-
հանջունքը բավարարելով: Մեղմ ասած՝ վիճակն այնքան էլ գոհացուցիչ չէ:
Ուսուցիչներից ոմանք իբրև այս իրավիճակի պատճառ նշում են ժամանակի
սղությունը, շարժառիթների բացակայությունը, ցածր աշխատավարձը, տեղե-
կատվական էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու անկարողությունը և այլն:
Իսկ մի խումբ ուսուցիչներ էլ համոզված են, որ մասնակցությունը վերապատ-
րաստման դասընթացներին, սեմինարներին, բավարար պայման է մասնագի-
տական աճի խնդիրը լուծելու համար:*

բ) Իրավիճակի շտկման ուղիները:

Մեր կարծիքով, առաջին խումբ ուսուցիչների նշած պատճառները թեև
իրական հիմք ունեն, բայց ընդունելի չեն կարող լինել, քանի որ ինքնակրթու-
թյունը պետք է լինի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքի անկապտելի մասը:
Իսկ երկրորդ խումբ ուսուցիչների համոզմունքի վերաբերյալ կարող ենք փաս-
տել, որ, անշուշտ, մասնագիտական աճը կարելի է բարձրացնել՝ մասնակցելով
ուսուցիչների վերապատրաստման տարատեսակ դասընթացների, սեմինար-
ների, գիտաժողովների և այլն: Սակայն այս գործընթացը էական արդյունք չի
կարող ապահովել՝ առանց ուսուցչի կողմից ինքնակրթության նպատակամետ
ձեռնարկման: Բառն ինքը՝ «ինքնակրթություն», ենթադրում է կամավոր, գի-
տակցված, սեփական գործունեության ինքնավերլուծության և ինքնակարգա-
վորման գործընթաց: Կարծում ենք՝ այս ճանապարհով ձեռքբերվածը շատ ա-
վելի կայուն է ու մնայուն, քան այն պատրաստի ձևով տրվածն ու մատուցածը:

Ներկայումս կազմակերպվող ատեստավորման ենթակա ուսուցիչների վե-
րապատրաստման դասընթացների բովանդակությունը կառուցված է ոչ միայն
կրթական նոր տեսությունների և տեխնոլոգիաների վերաբերյալ գուտ տեսա-
կան բնույթի դասախոսությունների հիմքով, այլև ուղղորդված են դեպի պրակ-
տիկ գործունեություն՝ իբրև ուսուցչի կողմից ինքնուրույն ուսումնական և մե-
թոդական նյութեր մշակելու, հետազոտական աշխատանքներ կատարելու և
դրանք ներկայացնելու գործընթաց, որոնց միջոցով էլ զարգանում են ուսուցչի
մասնագիտական հմտությունները, ինքնուսուցման և ինքնադրսևորման կա-

րողությունները: Այդուհանդերձ, ուսուցչի ինքնակրթության կազմակերպման, վերահսկման և աջակցելու գործընթացը մնում է դպրոցի արդիական պահանջների օրակարգում:

Անշուշտ, ձեռքբերումները շատ են, բայց նկատելի են նաև որոշակի բացթողումներ և դժվարություններ, որոնք անհապաղ շտկման կարիք ունեն: Իսկ շտկել կամ բացթողումները վերացնել կարելի է և հնարավոր՝ դպրոցում համապատասխան մթնոլորտի ստեղծման ու ուսուցչի ինքնակրթության կազմակերպման միջոցով:

Ինքնակրթության ունակությունը մանկավարժին չի տրվում մանկավարժական ԲՈՒՀ-ի դիպլոմի հետ միասին: Այդ պարտադիր բաղադրիչի առկայությունն արտահայտվում է յուրաքանչյուր ուսուցչի հոգեբանական և մտավոր ցուցանիշներով, և մշակվում աշխատանքային գործընթացում սկզբնաղբյուրների հետ աշխատելիս, վերլուծության, ինքնավերլուծության, գործընկերների և սեփական գործունեության ուսումնասիրության արդյունքում:

Ինչպես փորձը ցույց է տալիս, ոչ բոլոր ուսուցիչներն են ունակ իրենց գործունեությունն ինքնուրույն վերաիմաստավորելու և վերակառուցելու: Այդ գործում նրանք աջակցության կարիք ունեն: Ուստի այն չպետք է անտեսվի դպրոցի տնօրենության և մեթոդիկավորման կողմից: Այդ աշխատանքները պետք է ղեկավարվեն մեթոդիկավորման նախագահի կողմից, կրեն հետևողական և տևական բնույթ, լայն քննարկման նյութ դառնան մեթոդիկավորման կամ մանկխորհրդի նիստերում¹:

Դպրոցի տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալի և մեթոդիկավորման կողմից ինքնակրթության կազմակերպման աշխատանքները տեսադաշտում պահելու համար հարկավոր է՝

- ժամանակ առ ժամանակ պարզաբանել ինքնակրթության դերն ու նշանակությունը,
- տնօրենության կողմից վարել անհատական զրույցներ՝ ինքնակրթության հիմնական ուղղությունների մասին,
- Կազմակերպել դպրոցի տնօրենության և ուսուցիչների համատեղ քննարկումներ՝ դժվարամատչելի բաժինների կամ ծրագրային որոշ թեմաների յուրացման նպատակով: Արդյունքում մշակել առանձին ցուցումներ՝ դասերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
- օգնել ուսուցիչներին՝ իրենց փորձի ընդհանրացման, մանկավարժական խնդիրների վերաբերյալ զեկուցումների նախապատրաստման գործում, խթանել բարձր պատրաստականություն ունեցող ուսուցիչներին՝ գիտահետազոտական աշխատանքներով զբաղվելու,
- համարել մեթոդկաբինետի գրադարանը՝ ուսուցչի ինքնակրթությանն ու ինքնակատարելագործմանը նպաստող գրականությամբ, ինչպես նաև հոգեբանամանկավարժական ոլորտի նորույթներով,

¹ Մեթոդական աշխատանքը դպրոցում, հեղ. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխյան, Մ. Մանուկյան, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.

- պարբերաբար անցկացնել դասախոսություններ, խմբային և անհատական խորհրդատվություններ, սեմինարներ,

- ամփոփել, վերլուծել և համակարգել ուսուցիչների ինքնակրթական գործունեության արդյունքները (գրույց, հաշվետվություն մանկավարժական խորհրդի, մեթոդավարման նիստերում, փորձի փոխանակման, մանկավարժական կոլեկտիվի համար շնորհանդեսների կազմակերպում), որոշել նոր ուսումնական տարվա խնդիրները և դրանց իրականացման ուղիները:

Այսպիսով, տնօրենի, ուսումնական գծով տեղակալի, մեթոդավարման նախագահի խնդիրն է՝ այնպես կազմակերպել աշխատանքը, որ ինքնակրթությունը դառնա մանկավարժի պահանջմունքը՝ նրա մեջ ձևավորելով պատասխանատու վերաբերմունք իր մասնագիտական աճի և ինքնակրթության նկատմամբ:

Այս ամենով հանդերձ, այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ բոլոր դեպքերում հիմնական ծանրությունն ընկնում է ուսուցչի վրա, քանի որ նա իր կատարած ինքնուրույն աշխատանքով իր մասնագիտական ոլորտում աճ կապահովի, եթե կարողանա ժամանակին համընթաց քայլել: Անհերքելի ճշմարտություն է՝ աշխատանքում երբեք տեղում չդռնել, այլպես կարձանագրվի նահանջ զարգացման մեջ:

*Կարինե Թորոսյան
Կարինե Չիբուխյան*

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

2016-2017 ուստարում «Մաթեմատիկա» առարկայական չափորոշում և ծրագրերում փոփոխություններ չեն կատարվել: Ուստի ՀՀ հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի ուսուցումը կիրականացվի ԿԳ նախարարության կողմից երաշխավորված նախորդ տարվա դասագրքերով:

ՀՀ ուսումնական հաստատություններում պարբերաբար իրականացվում են մշտադիտարկումներ՝ պայմանավորված վերապատրաստման դասընթացների հետադարձ կապի ապահովման, մաթեմատիկայի ուսումնական գործընթացում մանկավարժական նոր տեխնոլոգիաների ու մեթոդների, ընթացիկ գնահատման գործընթացի ներդրման և այլ մեթոդական հնարների կիրարկման հետ:

Իրավիճակային վերլուծություն: Ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, որ մաթեմատիկայի ուսումնական գործընթացում ուսուցիչը հիմնականում իր առջև նպատակ է դնում զարգացնել սովորողների հաշվողական հմտությունները՝ հետին պլան մղելով նրանց *տրամաբանական մտածողության զարգացման հարցը*: Դասերի ժամանակ լիարժեք չեն իրացվում այն առաջադրանքները, (*հետաքրքրաշարժ, ոչ ստանդարտ, կռահունակություն պահանջող, օրինաչափություններ, խաչքառեր* և այլն), որոնք անհրաժեշտ և բաղկա-

ցուցիչ մասն են կազմում չափորոշչային այս կամ այն պահանջի ձևավորման համար:

Մաթեմատիկայի դասի ընթացքում հաշվողական առաջադրանքների կատարումը մեծ հատված է զբաղեցնում, իսկ խնդիրները (հատկապես դժվարավուն, տրամաբանական, հետաքրքրաշարժ) հանձնարարվում են տանը:

Ցուցում ուսուցին: Արդի կրթական համակարգում ընդհանրապես, տարրական դասարաններում մասնավորապես բացառիկ տեղ է հատկացվում ուսումնական գործընթացում սովորողների տրամաբանական մտածողության, ինքնուրույնության և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու, հաղորդակցական և այլ կարողությունների ձևավորմանը:

Ուստի մերօրյա մանկավարժի խնդիրն է՝ սովորողի համար ստեղծել ուսումնական այնպիսի միջավայր, որտեղ նա կարողանա ազատ մտածել, իր գործունեությունն ինքնուրույն կազմակերպել, միևնույն երևույթի վերաբերյալ տարբեր տեսակետներ արտահայտել, այդ երևույթները համեմատել՝ հիմնվելով օրինաչափությունների, օրենքների և փաստերի իմացության վրա, կարողանա սեփական դիտարկումների և ուրիշի փորձի հիման վրա իր կարծիքը ձևակերպել և հիմնավորել: Այս բոլոր գործընթացներն ուղղված են մի նպատակի՝ բացահայտել անձի մտավոր ներուժը՝ միաժամանակ զարգացնելով նրա մտածողությունը:

Կարծում ենք՝ ուսուցչի ծավալած գործունեությունը չպետք է սահմանափակի սովորողի իմացական կարողությունների և ստեղծագործական որոնումների շրջանակը, այլ ընդհակառակը՝ հնարավորություն տա նրան նորը փորձելու, բացահայտումներ անելու, իր գործունեությունը ինքնուրույն կազմակերպելու՝ ցուցաբերելով ինքնադրսևտրման և ինքնազարգացման կարողություններ:

Ինչո՞ւ ենք շարկապում հատկապես այս երկու կարողությունները. այն պարզ պատճառով, որ ինքնուրույն մտածելու արդյունքում է զարգանում **մտածողությունը**: Ուսուցչին ուսումնական գործընթացում պետք է կարևորի ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումը, այլ ստեղծի խնդրահարույց իրավիճակներ, որոնց ժամանակ սովորողը կարող է դատողություններ անել որևէ խնդրի շուրջ, ուղիներ մշակել, լուծումներ փնտրի, բացահայտումներ ու եզրահանգումներ կատարի. **սովորողի մտածողությունը զարգանում է, երբ նա դասի ակտիվ մասնակից է:**

Կատարված բազմաթիվ հետազոտությունները վկայում են, որ երեխայի մտավոր ընդունակություններն արդյունավետորեն զարգանում են 2-12 տարեկանում:

Հետևաբար՝ մտածողության և մաթեմատիկական հետաքրքրությունների ձևավորման խնդրով անհրաժեշտ է մտահոգվել նրա դպրոց մտնելու առաջին իսկ օրից:

Կրտսեր դպրոցական տարիքում ձևավորվում են բազմաթիվ հմտություններ ու կարողություններ, որոնք սովորողի հետագա գործունեության հիմնաքարն են դառնում: Անժխտելի է, որ ուսուցման արդյունավետությունն ամենից առաջ պայմանավորված է սովորողների մտավոր ակտիվության մակարդակով: Եթե

նրանք չեն ցուցաբերում անհրաժեշտ հետաքրքրություն և ձգտում հաղորդվելիք տեսական նյութի կամ տրված առաջադրանքի նկատմամբ, գտնվում են պասիվ վիճակում, ապա ուսուցման արդյունավետության մասին խոսելը դառնում է ավելորդ: Ուստի հարկավոր է մաթեմատիկայի դասը դարձնել գրավիչ, հետաքրքիր խթանելով սովորողների մտավոր ակտիվությունը: Ուսումնական գործընթացի ամենադժվար պահերից մեկը հենց դասանյութի խորությունը աշակերտի համար բացելը և հետաքրքրաշարժ դարձնելն է:

Դասավանդման մեթոդների ճիշտ ընտրության դեպքում մաթեմատիկայի դասաժամն անսպառ հնարավորություն է ընձեռում զարգացնելու սովորողի մտածողությունը, մաթեմատիկական հետաքրքրությունները: Ուսուցչի խնդիրն է դրանց տալ որոշակի ուղղություն՝ ձևավորելով սովորողի ճանաչողական հետաքրքրությունը և ցույց տալով գիտելիքների կարևորությունը: Իսկ այդ նպատակին հասնելու ձևերն ու հնարները բազմազան են. կատակ և հանելուկ-խնդիրները, տրամաբանական, հետաքրքրաշարժ, կռահունակություն պահանջող և խաղային առաջադրանքները, գլոխկոտրուկները, ռեբուսները, օրինաչափությունները, մաթեմատիկական խաչբառերը, դիդակտիկ և ստեղծագործական բնույթի խաղերը և այլն: Այդ միջոցների ճիշտ և նպատակային կիրառումը կակտիվացնի սովորողներին, կստեղծի ջերմ ու հաճելի մթնոլորտ, կմեծացնի հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դրանք կնպաստեն, որ սովորողների կարողություններն աստիճանաբար վերածվեն հմտությունների, իսկ գիտելիքները դառնան ավելի կայուն:

Մեթոդական ասպարեզում կան շատ ուսումնասովանողական նյութեր, որտեղ զետեղված են մտածողությունը խթանող, զարգացնող առաջադրանքներ: Մակայն դրացից զատ կարելի է այդ հարցը լուծել նաև դասագրքի շրջանակում. Առաջարկել սովորողներին ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում փոխել իրենց արդեն ծանոթ առաջադրանքների պահանջները: Նման մոտեցման դեպքում միևնույն առաջադրանքի նկատմամբ այլ մոտիվացիա է առաջանում:

Ներկայացնենք օրինակով դասագրքում տրված է.
Հաշվի՛ր.

13+17

26+14

25+25

Փոխում ենք առաջադրանքի պահանջը.

Դիտարկի՛ր պատասխանները: Գտի՛ր օրինաչափությունը և կազմի՛ր հաջորդ օրինակը:

Մաթեմատիկայի ուսումնական գործընթացին ստեղծագործաբար մոտեցումը, տարատեսակ տրամաբանական խնդիրների ընդգրկումն ու կարևորումը պայմանավորված է չափորոշում և առարկայական ծրագրերում հստակ ամրագրված դրույթներով:

Մաթեմատիկայի դասի ընթացքում ուսուցիչը պետք է հստակ իմանա, թե ո՞ր առաջադրանքը ո՞ր աշակերտի /կամ խմբի/ համար պետք է նախատեսել: Նա իր ձեռքի տակ պետք է ունենա բազմաբնույթ ու բազմաշերտ առաջադրանքների համապատասխան բանկ, որից, ըստ անհրաժեշտության, դասի ցանկացած փուլում կարողանալ օգտվել: Այս դեպքում, կարծում ենք, կբարձրանա և՛ դասի արդյունավետությունը, և՛ հետաքրքրությունը մաթեմատիկայի նկատմամբ:

Նմանօրինակ առաջադրանքներից են՝

➤ **Տրամաբանական խաղ-խնդիրները:** Առաջադրված խնդիրները պետք է լինեն ոչ շատ պարզ և ոչ էլ շատ բարդ: Դրանք պետք է համապատասխանեն սովորողների կարողություններին, կիրառվեն նպատակային, նպաստեն սովորողների գիտելիքների հարստացմանը և տրամաբանական մտածողության զարգացմանը: Օրինակ, «Մայրիկը ձու էր եփել: Երբ երեխաներին տվեց եփածի կեսը և էլի կես ձու, այլևս եփած ձու չմնաց: Քանի՞ ձու էր եփել մայրիկը»:

➤ **Հետաքրքրաշարժ առաջադրանքներ:** Այս համախումբը կարելի է օգտագործել դասի տարբեր փուլերում՝ էլնելով նպատակից: Օրինակ, դասի սկզբում՝ բանավոր հաշվի ժամանակ սովորողներին ակտիվ ուսումնական գործունեության մեջ ներգրավելու, դասի միջին մասում՝ նրանց հետաքրքրությունը մեծացնելու և նոր նյութի յուրացումը ամրապնդելու նպատակով, ինչպես նաև դասի վերջում սովորողներին թարմացնելու, ուշադրությունը կենտրոնացնելու համար առաջադրվում են հանելուկ-խնդիրներ:

Ցանկալի է, որ սովորողներին որպես տնային աշխատանք ևս տրվեն հետաքրքրաշարժ առաջադրանքներ (եթե համոզված եք, որ սովորողները դրանք ինքնուրույն են կատարելու), ինչպես նաև դրանք ընդգրկվեն մաթեմատիկայի արտադասարանական աշխատանքներում և համատեղ քննարկվեն: Օրինակ «Արևը կան կանաչ, կարմիր, կապույտ և դեղին գնդակներ: Ամենաքիչը քանի՞ գնդակ պետք է հանել այնտեղից, որ հանված գնդակներից առնվազն 2-ը լինեն միևնույն գույնի»:

➤ **Մաթեմատիկական խաչքառեր:** Սովորողները մեծ հետաքրքրությամբ են լուծում տարրական դասարանների մաթեմատիկայի ծրագրային նյութի շրջանակում կազմված բազմազան, հետաքրքիր խաչքառերը, որոնց լուծումը ոչ միայն օգնում է նրանց կրկնել և ամրապնդել անցած ծրագրային նյութը, այլև մարզել մտածողությունը, հանդես բերել կռահունակություն, զարգացնել մաթեմատիկական խոսքը:

Դրանք կարելի է առաջադրել կա՛մ դասի սկզբում, կա՛մ դասի միջին մասում՝ անցած թեման(երը) ամրակայելու նպատակով:

➤ **Օրինաչափություններ:** Սրանց կռահումը հստակ դատողություններ է պահանջում: Սովորողները օրինաչափության բանալին գտնելու համար պետք է համեմատեն օրինաչափության նախորդ և հաջորդ անդամները, վերլուծեն և ընդհանրացնեն: Լուծման բանալին գտնելը սովորողներին մեծ ուրախություն է պատճառում: Այն մտավոր գործունեությունը խթանող և ակտիվացնող լավագույն միջոցներից է: Օրինակ՝ Կռահի՛ր օրինաչափությունը և ավելացրո՛ւ ևս երկու թիվ. 1, 4, 5, 9, 14, 23, 37,, ..., (**60, 97**):

*Սոնա Մարգարյան
Մարինե Մանուկյան*

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

2016-2017 ուսումնական տարում «Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում դասավանդվելու է 1-7-րդ դասարաններում: Առաջին դասարանում հատկացված է շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 60 ժամ, 2-րդ դասարանում՝ 1 ժամ, տարեկան՝ 32 ժամ: 3-5-րդ դասարաններում՝ 1 ժամ, տարեկան՝

34 ժամ, 6-րդ և 7-րդ դասարաններում դասավանդվելու է միայն մեկ կիսամյակ՝ շաբաթական 1 ժամ, տարեկան՝ 17 ժամ:

Այս տարի վերահրատարակվել են 3-րդ և 6-րդ դասարանների դասագրքերը (հեղինակներ՝ Յ. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան):

3-րդ դասարանի դասագրքի հիմնական բովանդակությունը կազմված է ծրագրային 4 թեմաներից՝ «Երգի, պարի քայլերգի զարգացումը» (9 ժամ), «Ինտոնացիա» (8 ժամ), «Երաժշտության զարգացում» (9 ժամ) և «Երաժշտական ստեղծագործության կառուցվածքը» (8 ժամ):

Այս դասարանում սովորողները լսում են նվագարանային և նվագախմբային նոր ստեղծագործություններ, որտեղ երգը, պարը, քայլերգը վերաճում են ու դառնում երգային, պարային, քայլերգային տեսակներ: Նրանք ծանոթանում են խոսակցական և երաժշտական ինտոնացիաներին, երաժշտության զարգացմանը, ինչպես նաև երաժշտական ստեղծագործության կառուցվածքին:

6-րդ դասարանի դասագրքի հիմնական բովանդակությունը կազմված է ծրագրային 2 թեմաներից՝ «Երաժշտական կերպար» (10 ժամ) և «Երաժշտական կերպարի զարգացում» (7 ժամ):

Սովորողները տեղեկանում են, որ «Երաժշտական կերպար» և «Երաժշտական կերպարի զարգացում» թեմաները մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն են: Այդ երկու թեմաների բաժանումը պայմանական է: Դրանք մեկ ստեղծագործության մեջ լրացնում են միմյանց: Յուրաքանչյուր երաժշտական կերպարի մեջ նկատելի է պարզ զարգացում (դրամատիզմ):

Այսպես, սովորողները երաժշտության դասերի ընթացքում ունենդրվող և կատարվող ստեղծագործությունների մեջ կարողանում են զգալ երաժշտության զարգացումը՝ դրամատուրգիայի տարրերը:

Երաժշտության դասը դպրոցում դիտվում է որպես արվեստի դաս, ուստի ուսուցիչը պետք է իր աշխատանքով նպաստի սովորողների ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և հմտությունների զարգացմանը: Ուսումնական գործընթացը պետք է իրականացվի առարկայի չափորոշիչի պահանջներին և ծրագրային խնդիրներին համապատասխան:

Առաջարկում ենք «Երաժշտություն» առարկայի դասավանդման ընթացքում օգտվել համագործակցային ուսուցման մեթոդներից, հնարներից, դասը վարել երկխոսությունների ձևով, կազմակերպել խմբային աշխատանքներ, քննարկումներ: 5-7-րդ դասարաններում հանձնարարել ինքնուրույն հետազոտական աշխատանքներ, կարևորել միջառարկայական կապերը՝ ապահովելու համար սովորողների ակտիվ և ստեղծագործական մասնակցությունը ուսումնական գործընթացին:

Առարկայի արդյունավետ դասավանդման համար ուսուցիչները կարող են օգտվել նաև ուսումնական նյութերի ձայնագրություններից (CD), թեմատիկ պլանավորումից և աշխատանքային տետրերից:

2016թ. հրատարակվել է նաև «Երաժշտություն-1» ուսուցչի ձեռնարկը (հեղինակներ՝ Յ. Յուզբաշյան, Կ. Ղազարյան, Գ. Թադևոսյան)՝ 1-ին դասարանում դասավանդող ուսուցիչների համար: Այն կօգնի ուսուցիչներին արդյունավետ կազմակերպելու երաժշտական դաստիարակության և ուսուցման գործընթացները, քանի որ 1-ին դասարանում դասագրքի բացակայության պատճառով դասավանդման ընթացքում առաջանում են որոշակի խնդիրներ: Ձեռնարկում զետեղված են տվյալ դասարանի թեմատիկ պլանավորումը, յուրաքանչյուր

թեմայի կրթական խնդիրները, և բոլոր դասերի օրվա պլանները՝ մեթոդական ցուցումներով:

«Երաժշտություն» առարկայից տարրական դասարաններում տնային հանձնարարություն չենք տալիս, միջին դպրոցում մի քանի թեմաների ուսուցման ընթացքում կարելի է տնային հանձնարարություն տալ միայն հետազոտական կամ ինքնուրույն աշխատանքների ձևով:

Սովորողների ընթացիկ գնահատումը ներկայացվում է երկու ձևով՝ միավորային և ուսուցանող: Միավորային գնահատումն ունի սովորողների կրթական ձեռքբերումների մակարդակը վերահսկող դեր: Դրա նպատակն է թվանշանների մեջոցով գնահատել կամ չափել ուսումնական գործընթացում սովորողների ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշչով ու ծրագրով: Միավորային գնահատումը կատարում է կրթության որակը վերահսկելու դեր, այն պետք է կիրառել ուսումնական որևէ թեմա կամ ենթաթեմա անցնելուց և ուսումնասիրելուց հետո՝ ուսուցման որակը թվանշանով արտահայտելու միջոցով:

Ուսուցանող գնահատումը միտված է կրթության որակի բարելավմանը՝ հատկապես թույլ և միջին երաժշտական ունակություններ ունեցող սովորողների համար: Ուսուցանող գնահատումը կիրառվում է միավորային գնահատումների միջև ընկած ժամանակահատվածում, երբ սովորողների ձեռքբերումները համեմատվում են կրթական պահանջների և նրա նախկին ձեռքբերումների հետ: Այս դեպքում ուսուցիչը պարզում է կատարված աշխատանքների թերությունները և նշում դրանց վերացման ուղիները:

«Երաժշտություն» առարկայի գնահատման գործընթացում 2016-2017 ուսումնական տարում փոփոխություններ չկան: 2-7-րդ դասարաններում մեկ կիսամյակում նվազագույնը կարող է կատարվել 1 բանավոր (սյունակով) և 3 գործնական հարցում (ցրված): Ավելի նպատակահարմար է մեկ բանավոր հարցումը (սյունակով) իրականացնել կիսամյակի վերջում՝ ամփոփելով անցած բոլոր թեմաները և գնահատել դասարանի բոլոր սովորողներին: «Երաժշտություն» առարկայից կիսամյակային գնահատականը ձևավորվում է բանավոր հարցման և գործնական աշխատանքների գնահատականների հիման վրա:

«Երաժշտություն» առարկայից սովորողներին գնահատում ենք դասի վերջում՝ հաշվի առնելով ուսումնական գործունեության բոլոր տեսակներին նրանց մասնակցության աստիճանը: Չի կարելի գնահատել միայն առանձին գործունեության տեսակների համար:

Գնահատման գործընթացի մասին տեղեկություններ կարող եք ստանալ ամեն տարի հրատարակվող «ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ մեթոդական ցուցումներից»:

«Երաժշտություն» առարկայի դասավանդման վերաբերյալ մեթոդական օգնություն կարող եք ստանալ՝ հետևելով «Նախաշավիղ» և «Հայագիտությունը դպրոցում» ամսագրերում տպագրված հոդվածներին, նաև համացանցային ռեսուրսներին, մասնավորապես հետևյալ կայքէջերին՝ <http://armscoop.com/>, <http://hy.wikisource.org/>:

Միևեկ ուսուցիչներ, մաղթում ենք ձեզ հաջողություններ և արդյունավետ աշխատանք: Խնդրում ենք ներկայացնել ձեր առաջարկները և դիտողություն-

ները՝ առարկայի չափորոշիչի, ծրագրի, դասագրքերի վերաբերյալ: Առաջարկները կարող եք ուղարկել ԿԱԻ -ի էլեկտրոնային հասցեով՝ www.aniedu.am:

*Կարինե Ղազարյան
Գայանե Թադևոսյան*

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Հարգելի՛ ուսուցիչներ,

«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդումը 2016 - 2017 ուսումնական տարում իրականացվելու է 2012 թվականին ՀՀ ԿԳ նախարարի 27. 01. 2012 թ. N67-Ա/Ք հրամանով հաստատված 1-7-րդ դասարանների առարկայական չափորոշիչով և ծրագրերով:

«Տեխնոլոգիա» առարկայի ծրագրի նպատակն է՝ ապահովել սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների այն ծավալը, որը նախատեսված է տարրական և միջին դպրոցում՝ ըստ կրթական աստիճանների: Առարկայական ծրագրերում ներառված են միմյանց հետ փոխկապակցված բաժիններ, որոնք շարունակական են և ունեն հիմնականում գործնական բնույթ:

«Տեխնոլոգիա» առարկայի ծրագրային բաժինների ուսուցման համար նախատեսված ժամաքանակի 25-30%-ը կարելի է նախատեսել տեսական պարապմունքներին, իսկ 70-75%-ը՝ գործնական աշխատանքներին:

Տարրական դպրոց

«Տեխնոլոգիա» առարկայի ծրագրերի իրականացման համար ուսուցիչը պետք է հաշվի առնի կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները, մտավոր և ֆիզիկական հնարավորությունները, կամային գծերը, ուշադրությունը, հետաքրքրությունը, հակումները, խառնվածքը, անհրաժեշտության դեպքում դրսևորի անհատական մոտեցում:

Տարրական դասարանների ուսումնական ծրագրերում I և IV դասարանների «ընտրովի դասեր» ժամերը ուսուցիչը կարող է տրամադրել կրկնությունների կամ ծրագրային այլ թեմաների կատարմանը:

«Տեխնոլոգիա» առարկան 1-4-րդ դասարաններում նախատեսում է 60+64+34+34 ժամաքանակ՝ հետևյալ ուսումնական բաժիններով:

	Բաժնի անվանումը	Ժամերի քանակը՝ ըստ դասարանների				
		I	II	III	IV	ընդ.
1.	Ներածական պարապմունք	2	----	---	----	2
2.	Աշխատանք՝ թղթով և ստվարաթղթով	22	22	8	8	60
3.	Աշխատանք՝ մանածագործական նյութերով	8	8	5	4	25
4.	Աշխատանք՝ բնական և արհեստական նյութերով	12	16	7	----	35
5.	Ծաղիկների և դեկորատիվ բույսերի աճը և խնամքը	----	6	4	---	10
6.	Տեխնիկայի տարրեր	----	6	5	6	17
7.	Կենցաղ					
8.	Նախագիծ	4	6	5	4	19
9.	Ընտրովի դասեր	---	----	---	4	4
		12	----	----	8	20
	Ընդամենը	60	64	34	34	192

Միջին դպրոց

Առարկայի պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների, անկախ աշակերտների թվից (տես՝ Հանրակրթական հիմնական հատուկ պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների պարզաբանումների 35 կետը): Տղաների և աղջիկների համար տարբերակված ծրագրերը նպատակաուղղված են սովորողներին ապահովելու այնպիսի գիտելիքներով ու հմտություններով, որոնք կնպաստեն մասնագիտական կողմնորոշմանը և հետագայում հիմք կծառայեն արհեստագործական թեքումով դասարաններում ուսումը շարունակելու համար: Միջին դպրոցի V և VI դասարաններում ուսումնական պլանով նախատեսված է մեկական դասաժամ, իսկ VII դասարանում՝ երկու դասաժամ: Երկուական ժամերը նպատակահարմար է անցկացնել միասնական դասերի ձևով՝ պարտադիր կերպով պահպանելով դասամիջոցը:

2016-2017 ուսումնական տարում գործածության է դրվել VII դասարանի նոր դասագիրքը: Դասագրքերի կառուցվածքը և բովանդակությունը կհեշտացնի ձեր աշխատանքը, սակայն կարծում ենք, որ այն չպետք է սահմանափակի ձեր ստեղծագործական գործունեությունը:

«Տեխնոլոգիա» առարկայի ծրագրային բաժինները արդյունավետ դասավանդելու համար, առաջարկում ենք օգտվել ժամանակակից տեղեկատվական միջոցներից և կիրառել համակարգչային տեխնիկա: Այսօր ուսումնական գործընթացում S2S-ի կիրառումը ցանկալի է և անհրաժեշտ: Արդյունքում սովորողները հնարավորություն կունենան համակարգիչների օգնությամբ կատարել գործնական-նախագծային աշխատանքներ, ներբեռնել հետաքրքիր և բովանդակային դասանյութեր համապատասխան կայքերից:

«Տեխնոլոգիա» առարկայից տնային հանձնարարություն չի նախատեսվում, սակայն մի քանի թեմաների յուրացման համար կարելի է առաջարկել կատարել ինքնուրույն կամ հետազոտական պարզ աշխատանքներ:

Միջին դպրոցի տղաների և աղջիկների տարբերակված ծրագրերը V-VII դասարաններում նախատեսում է 34+34+68 ժամաքանակ՝ հետևյալ ուսումնական բաժիններով:

Մոդուլ 1 /տղաների տարբերակ/:

	Բաժնի անվանումը	Ժամերի քանակը՝ Ըստ դասարանների			
		5	6	7	ընդ.
1.	Ներածական պարապմունք	1	---	---	1
2.	Գրաֆիկա	6	6	10	22
3.	Փայտամշակման տեխնոլոգիա	6	7	10	23
4.	Մետաղամշակման տեխնոլոգիա	8	8	14	30
5.	Նյութերի գեղարվեստական մշակում	6	---	---	6
6.	Փայտանյութի գեղարվեստական մշակում	---	6	---	6
7.	Մետաղների գեղարվեստական մշակում	---	---	12	12
8.	Մեքենագիտության տարրեր	4	4	---	8
9.	Էլեկտրատեխնիկա	3	3	---	6
10.	Ռադիոէլեկտրոնիկա	---	---	4	4
11.	Տնտեսավարման և ձեռնարկչության տարրեր	---	---	6	6
12.	Դիզայն	---	---	4	4
13.	Մասնագիտական կողմնորոշում	---	---	2	2
14.	Նախագիծ	---	---	6	6
	Ընդամենը՝	34	34	68	136

Մոդուլ 2 /աղջիկների տարբերակ/:

	Բաժնիանվանումը	Ժամերի քանակը՝ ըստ դասարանների			
		5	6	7	ընդ.
1.	Ներածական պարապմունք	1	--	---	1
2.	Գրաֆիկա	6	6	10	22
3.	Խոհարարություն	6	7	10	23
4.	Հագուստի պատրաստման տեխնոլոգիա	8	8	14	30
5.	Նյութերի գեղարվեստական մշակում	6	6	12	24
6.	Մեքենագիտության տարրեր	4	4	---	8
7.	Էլեկտրոտեխնիկա	3	3	---	6
8.	Էլեկտրոտեխնիկա	---	---	4	4
9.	Ռադիոէլեկտրոնիկա	---	---	6	6
10.	Տնտեսավարման և ձեռնարկչության տարրեր	---	---	4	4
11.	Դիզայն	---	---	2	2
12.	Մասնագիտական կողմնորոշում	---	---	6	6
	Նախագիծ				
	Ընդամենը՝	34	34	68	136



Գնահատում:

«Տեխնոլոգիա» առարկայի գնահատումն իրականացվում է ընթացիկ և ամփոփիչ գնահատականներով՝ 10 միավորային սանդղակով: Ընթացիկ գնահատումը իրականացվում է երկու ձևով՝ միավորային և ուսուցանող:

Միավորային գնահատումն ունի սովորողների կրթական ձեռքբերումների մակարդակը վերահսկող դեր, որի նպատակն է թվանշանների մեջոցով գնահատել կամ չափել ուսումնական գործընթացում սովորողների ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշչով ու ծրագրով: Միավորային գնահատումն ունի կրթության որակը վերահսկող դեր, այն պետք է կիրառել ուսումնական որևէ թեմա կամ ենթաթեմա ուսումնասիրելուց հետո:

Ուսուցանող գնահատումը միտված է կրթության որակի բարելավմանը: Ուսուցանող գնահատումը առաջադիմությունը բարելավելու նպատակով ուսուցչին հնարավորություն է տալիս պարզել և նշել ուսուցման գործընթացում յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումները, դժվարությունները և դրանց վերացման ուղիները:

Ուսուցանող գնահատումը կատարվում է առանց միավորների՝ բանավոր հարցման և գործնական աշխատանքների միջոցով: Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքների միավորային գնահատումը կատարվում է ստուգման հետևյալ տեսակներով.

-  բանավոր հարցում,
-  գործնական աշխատանք:

Ներկայացնում ենք մեկ կիսամյակում միավորային գնահատման նվազագույն գնահատականների քանակի օրինակելի սանդղակ:

Դասարան	Շաբաթական դասաժամերը	Բանավոր հարցման գնահատում	Գործնական աշխատանքների գնահատում
III, IV, V, VI	1 ժամ	1 (նվազագույնը)	3 (նվազագույնը)
II, VII	2 ժամ	2 (նվազագույնը)	6 (նվազագույնը)

Կիսամյակային գնահատականը ձևավորվում է բանավոր հարցման և գործնական աշխատանքների գնահատականների հիման վրա: Մեկ կիսամյակի գնահատականների քանակը որոշում է ուսուցիչը՝ կախված աշակերտների թվից:

Գնահատման գործընթացի մասին տեղեկություններ կարող եք ստանալ 2016-2017 ուստարվա գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ մեթոդական ցուցումներից:

2016-2017թթ. ուսումնական տարում գործածության են՝

Տարրական դասարաններում

2015 թվականին հրատարակված I-ին, III և IV դասարանների դասագրքերը:

II դասարանում գործածության մեջ կլինի 2016 թ. տպագրված դասագիրքը:

Միջին դասարաններում

1. Ս. Հովսեփյան և ուրիշներ, «Տեխնոլոգիա» V դասարան, Երևան, «Տիգրան Մեծ», 2014թ.:
2. Ս. Հովսեփյան և ուրիշներ, «Տեխնոլոգիա» VI դասարան, Երևան, «Տիգրան Մեծ», 2015թ.:
3. Ս. Հովսեփյան և ուրիշներ, «Տեխնոլոգիա» VII դասարան, Երևան, «Տիգրան Մեծ», 2016թ.:
4. Ս. Հովսեփյան և ուրիշներ, «Ուսուցչի ձեռնարկ V-VII դասարանների համար», Երևան, «Տիգրան Մեծ», 2014թ.:
5. Ա. Հարությունյան, Ս. Հովսեփյան, Ժ. Ավետիսյան, «Գործնական աշխատանքներ», Ուսումնական ձեռնարկ, «Աստղիկ գրատուն», 2011թ.:
6. Ժ. Ավետիսյան, «Տեխնոլոգիա», Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Երևան, «Աստղիկ գրատուն», 2014թ.:

«Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչները և ծրագրերը կարելի է ներբեռնել Կրթության ազգային ինստիտուտի www.aniedu.am կայքից:

*Ժաննա Ավետիսյան
Մահակ Հովսեփյան*

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Մշտադիտարկման արդյունքները

2016 թ. ապրիլ-հունիս ամիսներին կազմակերպված նախատեստացիոն վերապատրաստումների ընթացքում «Կերպարվեստ» առարկան դասավանդող ուսուցիչների շրջանում իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվեցին մի շարք հիմնահարցեր.

1. Առարկայական չափորոշային և ծրագրային պահանջների ապահովում

«Կերպարվեստ» առարկայի չափորոշային և ծրագրային պահանջների ապահովումը և դրա հիմքում դրված գեղագիտական դաստիարակության, ճաշակի զարգացման, բնության, պատմական և մշակութային հուշարձանների պահպանության գիտակցության ձևավորման, ինչպես նաև հոգևոր ու բարոյական մի շարք խնդիրների լուծման հաջողությունն էապես պայմանավորված է համապատասխան կերպարվեստային կրթություն ստացած և արհեստավարժ մանկավարժների գործունեությամբ: Այսօր հանրակրթական հաստատություններում, հատկապես մարզերում, կերպարվեստային կրթությունը ոչ միշտ է վստահված մասնագետ ուսուցիչներին: Հատկապես տարրական դասարաններում դասվարների կողմից իրականացվող ուսուցումը չի ապահովում համապատասխան գեղագիտական-գեղարվեստական և ստեղծագործական արդյունավետ գործընթաց: Ուսուցիչների՝ վերջին տարիների ընթացքում իրականացված նախատեստացիոն և մասնագիտական բնույթի վերապատրաստման դասընթացները թույլ են տալիս արձանագրել, որ տարրական դասարաններում առարկան դասավանդող դասվարների վերապատրաստումներն ավելի շատ ժամանակ են պահանջում. նույնիսկ մեծ ցանկության և ձգտման առկայությամբ, նրանց հետ աշխատանքի ընթացքում մասնագիտական բնույթի բազմաթիվ խնդիրներ են ծագում:

Հանրակրթական շատ հաստատություններում «Կերպարվեստի» յուրահատուկ կարգավիճակը երբեմն կողմնակալ վերաբերմունքի է արժանացնում՝ անհիմն կերպով այն կոչում են «երկրորդական» առարկա: Դրա հիմնական պատճառը արհեստավարժ ուսուցչի բացակայությունն է, կամ դպրոցի ղեկավարների անփութությունը: Նկատվել է, որ հանրակրթական այն հաստատություններում, որտեղ առարկայի նկատմամբ սրտացավ և գիտակ վերաբերմունք է ցուցաբերվում, սովորողների առաջադիմությունը, կազմակերպվածությունը և ստեղծագործական գործունեությունը շատ ավելի բարձր մակարդակների են հավակնում:

Կերպարվեստը լայն հնարավորություններ ունի աճող սերնդի գեղագիտական դաստիարակության գործում: Աշխարհի ճանաչողությունը կերպարվեստի միջոցների՝ գծի, գույնի ու կերպարների օգնությամբ, սովորողներին թույլ է տալիս ընդհանրացնել իրենց տեսադաշտը և նկատել ու ընկալել հայրենի բնության գեղեցկությունը: Սա է այն իրական և բնական միջավայրը, որը պարտավոր ենք ներկայացնել որպես հենք՝ գեղագիտական դաստիարակության խնդիրներն իրականացնելու համար: Դրանց լուծման զգալի մասը բաժին է ընկնում «Կերպարվեստ» առարկան դասավանդող ուսուցիչներին: Անկախ առարկային հատկացված ժամաքանակից՝ յուրաքանչյուր ուսուցիչ աշխատում է դասերի ընթացքում ապահո-

վել ստեղծագործական աշխույժ մթնոլորտ, դասավանդումը դարձնել առավել հետաքրքիր, բազմազան և արդյունավետ՝ ձևավորելով աշխատանքի սեփական ոճ:

2. Կերպարվեստի դասավանդման մեթոդական հարցեր

Մշտադիտարկման գործընթացը ցույց տվեց, որ ուսուցիչների կողմից նախընտրելի են դասավանդման ավանդական ձևերը: Հիմնական պատճառը առարկայի դասավանդման խիստ անհատականացված և գործնական բնույթն է: «Կերպարվեստի» կաբինետների բացակայության պարագայում դասասենյակներում ակտիվ, ստեղծագործական և աշխատանքային միջավայրի ստեղծման միտումը բախվում է «ավելորդ աղմուկից» խուսափելու հնացած կարգավիճակին: Դասավանդման ժամանակակից մեթոդները հիմնականում կիրառվում են տեսական բնույթի նյութեր ուսումնասիրելիս, իսկ դրանք, «Կերպարվեստի» գործնական բնույթով պայմանավորված, նվազ տոկոս են կազմում:

3. Սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման մտեցումներ

«Կերպարվեստ» առարկայից սովորողների գիտելիքները գնահատելիս անհրաժեշտ է առաջնորդվել «Մեթոդական ցուցումներ՝ 2016-2017 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ» փաստաթղթով:

Ինչ վերաբերում է գործնական աշխատանքների և բանավոր հարցումների գնահատման մատենավարությանը, ապա նպատակահարմար է գործնական աշխատանքների գնահատականները գրանցել սյունակով, իսկ բանավոր հարցման արդյունքները՝ ցրված: Հարկ է նորից նշել, որ կերպարվեստի բոլոր պարապմունքներն էլ իրենց բնույթով գործնական են, և ուսուցիչները հաճախ են սովորողների աշխատանքները գնահատում տեսրերում և օրագրերում: Մատչանում նշանակված գնահատանիշն ամենին չի նշանակում առանձնացված, ստուգողական աշխատանքի գնահատական: Սովորողների կողմից տվյալ օրը կատարված աշխատանքներն առանձնացնելու անհրաժեշտություն չկա, առավել ևս նկարչական ալբոմի էջերը պատռելու:

Սովորողների ուսումնական գործընթացի արդյունավետության, նրանց ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել նաև ուսուցանող գնահատում: Արդյունավետ են անհատական թղթապանակների ստեղծումը, ցուցահանդեսների, ստեղծագործական բնույթի միջոցառումների, կինոդիտումների և էքսկուրսիաների անցկացումը:

«Կերպարվեստ» առարկայի դասավանդումը հանրակրթական դպրոցում իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 2012 թ. փետրվարի 2-ին հաստատված 12-ամյա հանրակրթական դպրոցի 1-7-րդ դասարանների ծրագրով, որը կազմված է սովորողների բնական զարգացման ուղիների օգտագործման հնարավորության, ինչպես նաև անհատի ձևավորման գործում գեղարվեստական գործունեության դերի հաշվառմամբ:

Առարկայի բովանդակային զծերը ներկայացվում են միասնաբար և փոխկապակցված ձևով՝ ամբողջական թեմաների միջոցով: Թեմաներից յուրաքանչյուրի համար նախատեսված են կրթական որոշակի խնդիրներ, սովորողներից

ակնկալվող չափորոշչային գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, համապատասխան բովանդակություն, հատկացվող ժամաքանակ:

Առաջնորդվելով առարկայական ծրագրով՝ ուսուցիչներն իրենք են կազմում դասընթացի թեմատիկ պլանավորումը՝ պահպանելով գործունեության ձևերի փոխկապակցվածությունն ու համամասնությունը: Ծրագրի կառուցվածքը թույլ է տալիս գործունեության տարբեր ձևերից առանձնացնել տվյալ դասարանում սովորողների պատրաստվածությանն ու հնարավորություններին համապատասխան թեմատիկա: Առարկայական ծրագրերի լրամշակման և բեռնաթափման արդյունքում ուսուցիչները հնարավորություն ունեն իրենց ստեղծագործական և մանկավարժական հմտություններն իրագործել նաև էքսկուրսիաների, հանդիպումների և ստեղծագործական բնույթի այլ աշխատանքների կազմակերպման միջոցով:

Ուսուցչին հնարավորություն է տրվում կազմել ինքնուրույն առաջադրանքներ, որոնք սակայն պետք է ներառեն հինգ կարևոր գործունեների միասնություն.

- ուսումնական խնդիր (գույն, ձև, տարածություն),
- աշխատանքի թեմա կամ պատկերվող օբյեկտ,
- աշխատանքի տեսակ (բնօրինակից, թեմատիկ, ստեղծագործական և այլն),
- նյութ,
- տվյալ դասին ներկայացվող եզրույթների և հասկացությունների առկայություն:

Մեկ առաջադրանքի կատարման ընթացքում ընդհանուր առմամբ աշակերտի առջև դրված մի քանի ուսումնական խնդիրներից ցանկալի է գոնե երկուսի լուծումը.

- տեսական գիտելիքների ձեռքբերում (ըստ թեմատիկայի),
- որոշակի հմտությունների ձեռքբերում՝ պայմանավորված գործնական աշխատանքի արդյունքով (ըստ առաջադրանքի բարդության):

Հարկավոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական կարողությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը բոլոր թեմաների ուսուցման կարևոր բաղադրիչ է:

2016-2017 ուստարում 1-4-րդ դասարաններում ՀՀ ԿԳ նախարարության կողմից գործածության են երաշխավորվել հետևյալ դասագրքերը և աշխատանքային տետրը.

1-ին դասարան - Լ. Ներսիսյան, Ե. Գյուլմիսարյան, Կերպարվեստ - 1, աշխատանքային տետր, «Զանգակ», 2014:

2-րդ դասարան - Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան, Կերպարվեստ - 2, «Զանգակ», 2014:

3-րդ դասարան - Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան, Կերպարվեստ - 3, «Զանգակ», 2015:

4-րդ դասարան - Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան, Կերպարվեստ - 4, «Զանգակ-97», 2015:

Դասագրքերի ներկայացված փաթեթի հետ գործում է նաև ուսուցչի ձեռնարկ, «Զանգակ - 97», 2014:

5-7-րդ դասարաններում առարկայի դասավանդումն առայժմ կազմակերպվելու է առանց դասագրքերի՝ նախորդ տարիներին կիրառվող թեմատիկ պլանավորման հիման վրա:

6-րդ և 7-րդ դասարաններում առարկայի ուսուցմանը հասկացվում է տարեկան 17-ական ժամ: Այն իրականացվում է մեկ կիսամյակի ընթացքում: Ուսումնական տարվա ավարտին ձևավորվող կիսամյակային գնահատականը միաժամանակ սովորողի տարեկան գնահատականն է:

Միբեյի՝ ուսուցիչներ, նոր ուսումնական տարվա ընթացքում ևս իրականացվելու են «Կերպարվեստ» առարկայի չափորոշչի, ծրագրի, ինչպես նաև դասագրքերի ու աշխատանքային տետրի մշտադիտարկում և փորձաքննություն: Ձեր կարծիքներն ու դիտողությունները կնպաստեն առարկայի ուսումնամեթոդական փաթեթի կատարելագործմանը:

Մարիամ Պետրոսյան

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

2016-2017 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ

Ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու հիմնական ձևերից՝ միավորային (ամփոփիչ) գնահատում և ուսուցանող գնահատում:

Միավորային գնահատում

Ուսումնական առարկայով պայմանավորված՝ միավորային գնահատումն իրականացվում է հետևյալ հիմնական տեսակներով.

- ❖ բանավոր հարցում,
- ❖ գործնական աշխատանք,
- ❖ թեմատիկ աշխատանք,
- ❖ կիսամյակային ամփոփիչ աշխատանք,

ինչպես նաև «կարճ ժամանակի համար նախատեսվող» հարցարանը (թեստը)՝ որպես թեմատիկ աշխատանք, և «տնային աշխատանքը» որպես բանավոր հարցում ոչ պարտադիր տեսակները:

Ըստ ուսումնական առարկաների՝ միավորային գնահատումն իրագործվում է հետևյալ ձևով.

Բոլոր առարկաներից մեկ կիսամյակում բանավոր հարցման քանակը պետք է լինի առնվազն շաբաթական ժամաքանակին հավասար, բացառությամբ լեզուների, «Հասարակագիտություն» առարկայի 8-9-րդ դասարանների, «Հայրենագիտություն», «Համաշխարհային պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն» և ՆԶՊ առարկաների, որոնց քանակը պետք է լինի շաբաթական ժամաքանակի առնվազն կրկնակին: II-IV դասարանների «Մայրենի» առարկայից բանավոր հարցման քանակը՝ կիսամյակում առնվազն 8 անգամ, «Ֆիզկուլտուրա» առարկայից՝ բոլոր դասարաններում առնվազն 2 անգամ:

Բոլոր առարկաներից անց է կացվում կիսամյակային ամփոփիչ աշխատանք՝ բացառությամբ «Երաժշտություն», «Ֆիզկուլտուրա», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն», «Շախմատ» առարկաների, «Օտար լեզու» առարկայի 3-րդ դասարանի առաջին կիսամյակի և «Ռուսաց լեզու» առարկայի 2-րդ դասարանի առաջին կիսամյակի, որոնք չունեն կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Դպրոցի տնօրինությունը՝ ուսուցչի պահանջով, կարող է տվյալ ուսումնական առարկայի համար դասամատյանում հատկացնել առանձին էջ՝ «Գործնական աշխատանք» բաղադրիչի գրանցումների համար:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքների միավորային գնահատման նվազագույն քանակներն ըստ ուսումնական առարկաների՝ մեկ կիսամյակում: Դպրոցական պարտադիր ժամերի բաշխու-

մից կախված՝ ներկայացված քանակները կարող են ենթարկվել փոփոխության՝ պահպանելով տվյալ առարկայի համար կիրառվող քանակների որոշումը շաբաթական ժամաքանակից կախված:

Աղյուսակ

№	Ուսումնական առարկա	Դասարան	Գործնական աշխատանք Գ	Թեմատիկ գրավոր աշխատանք Թ
1.	Մայրենի	2-4	1	4
		5	1	7
		6	1	6
2.	Հայոց լեզու	7	1	3
		8-9	1	2
		10-12	-	2
3.	Գրականություն	7	1	2
		8-9	1	3
4.	Հայ գրականություն	10-12	-	3
5.	Ռուսաց լեզու	2 (II կիսամյակ*),	-	1
		3, 10-12	-	2
		4-9	-	3
6.	Օտար լեզու	3 (II կիսամյակ*),	-	1
		4-12	-	2
7.	Մաթեմատիկա	2-4	1	4
		5-6	1	5
8.	Երաժշտություն	2-7**	3	-
9.	Կերպարվեստ	2-7**	3	-
10.	Ես և շրջակա աշխարհը	2-3	1	1
		4	2	1
11.	Հայրենագիտություն	5	1	1
12.	Բնագիտություն	5-6	1	1
13.	Աշխարհագրություն	6-8, 10-12	1	1
14.	Հայաստանի աշխարհագրություն	9	1	1
15.	Հայոց պատմություն	6-12	1	1
16.	Համաշխարհային պատմություն	6-12	1	1
17.	Հայոց եկեղեցու պատմություն	5-11	1	1
18.	Հասարակագիտություն	8-12	1	1
19.	Հանրահաշիվ	7-9	-	3
		10-12	-	2 և 1 կարճ
20.	Երկրաչափություն	7-9	1	2
		10-12	1	1 և 1 կարճ
21.	Ինֆորմատիկա	6-9	2	1 (կարճ ժամանակի համար)

		10-12	2	2 (կարճ ժամանակի համար)
22.	Ֆիզիկա	7-9	2	1
		10-12	2	2
23.	Քիմիա	7-12	2	1
24.	Կենսաբանություն	7-12	2	1
25.	Տեխնոլոգիա	2 և 7	6	-
		3-6	3	-
26.	ՆՁՊ և անվտանգ կենսագործունեություն	8-12	3	-
27.	Ֆիզկուլտուրա	2, 3, 4	8	-
		5-11	12	-
		12***	6	-
28.	Շախմատ	2-4	-	1

*«Օտար լեզու» 3-րդ դասարանի առաջին կիսամյակում և «Ռուսաց լեզու» 2-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատման ենթակա է միայն «բանավոր հարցում» բաղադրիչը, կիսամյակային գնահատականը որոշվում է միայն բանավոր հարցումից ունեցած գնահատականների գումարը դրանց քանակին բաժանելով:

**6-7-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներից մեկը, հաստատության ընտրությամբ, դասավանդվում է առաջին, մյուսը՝ երկրորդ կիսամյակում:

***12-րդ դասարանում, եթե նույն ուսումնական տարվա մի կիսամյակում ֆիզկուլտուրա առարկային տրվում է 2 ժամ, մյուսում՝ 1 ժամ, ապա գործնական աշխատանքների նվազագույն քանակներն են համապատասխանաբար 8 և 4:

Ավագ դպրոցի բոլոր հոսքերում, մեկ կիսամյակում,

- եթե մաթեմատիկայի (հանրահաշիվ, երկրաչափություն) և լեզուների շաբաթական ժամաքանակը չի գերազանցում 4-ը, ապա թեմատիկ աշխատանքների նվազագույն քանակը պետք է հավասար լինի առարկայի շաբաթական ժամաքանակին: Եթե մաթեմատիկայի և լեզուների շաբաթական ժամաքանակը 4-ից ավել է, ապա այդ առարկայի թեմատիկ աշխատանքների քանակը պետք է լինի առնվազն 4,

- բացի մաթեմատիկայից և լեզուներից, մնացած առարկաների դեպքում, եթե առարկայի շաբաթական ժամաքանակը չի գերազանցում 6-ը, ապա թեմատիկ աշխատանքների նվազագույն քանակը պետք է հավասար լինի առարկայի շաբաթական ժամաքանակի կեսին: Եթե վերջինս ամբողջ թիվ չէ, ապա վերցվում է դրան անմիջապես հաջորդող ամբողջ թիվը (օրինակ՝ եթե առարկային հատկացված է 5 ժամ, ապա թեմատիկ գրավոր աշխատանքների քանակը որոշելու համար $5:2=2,5$ թիվը մոտարկում ենք հաջորդող ամբողջ թիվով, հետևաբար դրանց քանակը կլինի 3): Շաբաթական 7 և ավելի ժամ ունեցող հոսքային առարկաների թեմատիկ աշխատանքների քանակը պետք է լինի առնվազն 4:

Դպրոցական բաղադրիչի ժամաքանակից հատկացված ԿԳՆ կողմից երաշխավորված լրացուցիչ հանրակրթական առարկայի(ների) գնահատման խնդիրներով դիմել Կրթության ազգային ինստիտուտի գնահատման բաժին:

Կիսամյակային և տարեկան գնահատականների ձևավորումը

1. Աշակերտի կիսամյակային գնահատականը բոլոր առարկաներից՝ բացառությամբ շաբաթական մինչև 1,5 ժամ ունեցող ուսումնական առարկաների, ձևավորվում է հետևյալ կերպ.

ա. հաշվվում է կիսամյակի ընթացքում միավորային գնահատման բոլոր տեսակներից՝ բացառությամբ կիսամյակային աշխատանքից, աշակերտի ստացած գնահատականների միջին թվաբանականը, և այն մոտարկվում է ամբողջ թվով,

բ. հաշվվում է ստացված միջին թվաբանականի և կիսամյակային աշխատանքից ստացած գնահատականի միջին թվաբանականը, և այն մոտարկվում է ամբողջ թվով:

Ստացված ամբողջ թիվը կլինի աշակերտի կիսամյակային գնահատականը:

2. Շաբաթական մինչև 1,5 ժամ ունեցող ուսումնական առարկաների դեպքում կիսամյակային գնահատականը ձևավորվում է միավորային գնահատման բոլոր տեսակներից ստացված գնահատականների միջին թվաբանականով:

Շաբաթական 1,5 ժամ ունեցող առարկաների դեպքում, եթե մի կիսամյակում տրամադրվում է շաբաթական 2 ժամ, մյուսում՝ 1 ժամ, ապա 2 ժամի դեպքում կիսամյակային գնահատականը ձևավորվում է կետ 1-ում տրված ձևով, իսկ 1 ժամի դեպքում՝ կետ 2-ում տրված ձևով:

Եթե 12-րդ դասարանում տվյալ ուսումնական առարկայի ուսումնասիրությունն ավարտվում է 1-ին կիսամյակում, ապա այդ առարկայի տարեկան գնահատական համարվում է առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականը:

Ստորև ներկայացվում է աշակերտի կիսամյակային գնահատականի ձևավորման մի օրինակ:

Դիցուք, աշակերտը «Երկրաչափություն» առարկայից մեկ կիսամյակում ըստ գնահատվող բաղադրիչների՝ ստացել է հետևյալ գնահատականները.

Բանավոր հարցում /Բ/ - 5; 4; 7; 6; 8

Գործնական աշխատանք /Գ/ - 5; 6

Թեմատիկ աշխատանք /Թ/ - 6; 8

Կիսամյակային ամփոփիչ աշխատանք /Կ/ - 7

1. Ուսուցչի նշանակած միավորային գնահատականների միջին թվաբանականը՝ բացառությամբ կիսամյակային ամփոփիչ աշխատանքի գնահատականի, կլինի.

$$(5+4+7+6+8+5+6+6+8)/9=55/9\approx 6.1\approx 6:$$

2. Ստացված միջին թվաբանականի և կիսամյակային ամփոփիչ աշխատանքից ստացած միավորի միջին թվաբանականը կլինի.

$$(6+7)/2=6.5\approx 7:$$

Այսպիսով, աշակերտի կիսամյակային գնահատականը (ԿԳ) 7 է:


Կիսամյակային գնահատականի ձևավորումը, դպրոցի տնօրենության և ուսուցչի ցանկությամբ, կարելի է իրականացնել առավել ամբողջական՝ գործակիցների կիրառմամբ:

Սովորողի տարեկան գնահատականը նրա ստացած երկու կիսամյակային գնահատականների միջին թվաբանականն է: Եթե ստացվածն ամբողջ թիվ չէ, ապա այն մոտարկվում է թվերի մոտարկման կանոնով:

Օրինակ՝ եթե մի կիսամյակային գնահատականը «7» է, իսկ մյուսը՝ «6», ապա տարեկան գնահատականը կլինի՝ $(7+6):2=6.5\approx 7$:

Մտուգման երեք տեսակներից (բանավոր հարցում, գործնական աշխատանք, թեմատիկ աշխատանք) ստացված թվանշանների միջին թվաբանականը մատյանում գրանցվում է «Աշակերտների առաջադիմության հաշվառման ամփոփագիր» էջի համապատասխան սյան մեջ:

Մտուգման որևէ տեսակից բացակայելու դեպքում տվյալ աշխատանքի հետագա հանձնումը

Թեմատիկ, գործնական կամ կիսամյակային ամփոփիչ աշխատանքից բացակայած սովորողն այն կարող է հանձնել մինչև տվյալ կիսամյակի ամփոփումը: Այդ աշխատանքներից սովորողի բացակա լինելը նշելու համար անկյունագծով կիսվում է համապատասխան վանդակը, ներքևի մասում գրվում «բ» տառը, իսկ վերևի մասում գրանցվում է հետագա հանձնումից ստացված թվանշանը: Հանձնման գործընթացը կարգավորում է դասավանդող ուսուցիչը: Սովորողի՝ լրացուցիչ հանձնումից ստացած գնահատականը՝ օրինակ «7»-ը, գրանցվում է դասամատյանում հետևյալ ձևով  Այնուամենայնիվ, եթե մինչև կիսամյակի ամփոփումը սովորողը չի հանձնում աշխատանքը, ապա այդ աշխատանքին տրվում է «1» միավոր՝ գրանցելով այն համապատասխան վանդակում:

Գնահատման այլ սանդղակային միավորի փոխարկումը 10 միավորային սանդղակի համապատասխան միավորի

Հանրակրթության պետական չափորոշիչը թույլ է տալիս, բացի 10 միավորային սանդղակից, կիրառել նաև գնահատման այլ սանդղակներ: Այդպիսի դեպքերում ստացված միավորը 10 միավորային սանդղակի համարժեք միա-

վորով արտահայտելն իրականացվում է հետևյալ բանաձևով՝ $n = \frac{s}{m} \cdot 10$, որ-

տեղ s -ը այլ սանդղակով սովորողի ստացած միավորն է, m -ը նույն սանդղակի առավելագույն միավորն է, իսկ n -ը կլինի 10 միավորային սանդղակով սովորողի ստացած միավորը: Եթե n -ը ամբողջ թիվ չէ, ապա այն մոտարկվում է ամբողջ թվով:

Օրինակ՝ սովորողը 20 միավորային գնահատման սանդղակով ստացել է 15 միավոր: Համաձայն նշված բանաձևի

$$s = 15, m = 20, \text{ իսկ } n = \frac{15}{20} \cdot 10 = 7,5 \approx 8:$$

Այսպիսով, սովորողի ստացած միավորի համարժեքը 10-միավորային սանդղակով կլինի 8 միավոր:

Ուսուցանող գնահատում

2016-2017 ուսումնական տարում ուսուցանող գնահատման գաղափարաբանությանը, կիրառվող ձևերին ու տեսակներին ուսուցիչները կձանոթանան վերապատրաստման դասընթացներում, ինչպես նաև կարող են այցելել ԿԱԻ-ի կայքէջը՝ aniedu.am և ծանոթանալ գրադարան բաժնում տեղակայված «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան» ձեռնարկի բովանդակությանը: 2016-2017 ուսումնական տարում ուսուցանող գնահատման նպատակով կիրառման են երաշխավորվում ուսուցանող գնահատման հետևյալ տեսակները՝ բանավոր հարցում, հայտորոշիչ թեստ, գործնական աշխատանք, տնային աշխատանք:

Դրանց կիրառման քանակը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

*Ս. Մակյան
Օնիկ Միքայելյան*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

N 733-Ա/2

«18» 07 2016թ.

**2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ
ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդված 1-ին կետի 8-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի առաջարկությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել 2016-2017 ուսումնական տարում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի անվանացանկը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
հուլիսի 2016թ. N733-Ա/2 հրամանի

Ց ա ն կ

**2016-2017 ուստարում հանրակրթական ուսումնական
հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի**

N	Դասագրքի անվանումը	Հեղինակը	Հրատարակչու- թյունը	Հրատ. թիվը
---	-----------------------	----------	------------------------	---------------

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

1.	Այբբենարան	Վ.Սարգսյան	«ՄԱՆՄԱՐ»	2016
2.	Այբբենարան	Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան	«Էդիթ Պրինտ»	2016
3.	Մայրենի	Վ.Սարգսյան	«ՄԱՆՄԱՐ»	2015, 2016
4.	Մայրենի	Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան	«Էդիթ Պրինտ»	2015, 2016
5.	Մաթեմատիկա (I մաս)	Վ.Հովհաննիսյան ...	«Արևիկ»	2016
6.	Մաթեմատիկա (I մաս)	Ս. Մկրտչյան...	«Զանգակ»	2016
7.	Մաթեմատիկա(II մաս)	Վ.Հովհաննիսյան ...	«Արևիկ»	2015, 2016
8.	Մաթեմատիկա(II մաս)	Ս. Մկրտչյան...	«Զանգակ»	2015, 2016
9.	Եզրհիերեն լեզվի այբբենարան	Հ.Թամոյան, Ա.Թամոյան	«Սպիկա»	2016
10.	Կերպարվեստ	Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան	«Զանգակ»	2016
11.	Տեխնոլոգիա	Ս. Հովսեփյան և ...	«Տիգրան Մեծ»	2016
12.	Խոսիր ասորերեն	Մուրադովա Տ. Ա. ...	«ՆոյյանՏապան»	2011
13.	Գրիր և խոսիր ասորերեն	Մուրադովա Տ. Ա. ...	«ՆոյյանՏապան»	2010
14.	Այբբենարան (քրդ.)	Ալիսանե Մամե, Գյասըմե Խալըտ	«Սպիկա»	2009

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Մայրենի	Վ.Սարգսյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014, 2016
2.	Մայրենի	Ա.Քյուրքչյան...	«Էդիթ Պրինտ»	2014, 2016
3.	Մաթեմատիկա	Վ.Հովհաննիսյան, Վ.Սարգսյան	«Արևիկ»	2014, 2016
4.	Մաթեմատիկա	Ս. Մկրտչյան...	«Զանգակ»	2014, 2016
5.	Բուկվար	Ն.Բայբուրջյան, Ի.Յակուբովա	«ՄԱՆՄԱՐ»	2015

6.	Բուկվար	Բ. Եսաջանյան, Վ. Խանգրատյան	«Էդիթ Պրինտ»	2015
7.	Բուկվար (խ.ուս.հ.)	Բ. Եսաջանյան, Լ. Բալասանյան	«Ֆիլին»	2014
8.	Ես և շրջակա աշխարհը	Ա. Հովսեփյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014, 2016
9.	Ես և շրջակա աշխարհը	Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան	«Աստղիկ Գրատուն»	2014, 2016
10.	Երաժշտություն	Յու.Յուզբաշյան, Ա. Փահլևանյան	«Ջանգակ»	2015
11.	Կերպարվեստ	Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան	«Ջանգակ»	2014
12.	Տեխնոլոգիա	Ս. Հովսեփյան ...	«Տիգրան Մեծ»	2014, 2016
13.	Շախմատ	Հ.Թումանյան	«Հայաստանի շախմատի ակադեմիա»	2014
14.	Ֆիզկուլտուրա	Վ. Առաքելյան...	«Աստղիկ Գր.»	2015
15.	Գրիր և խոսիր ասորերեն	Մուրադովա Տ. Ա. ...	«Նոյյան Տապան»	2010
16.	Եզդիերեն	Ա. Թամոյան...	«Սպիկա»	2015
17.	Մայրենի լեզու (քրդ.)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2012

ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Մայրենի	Վ. Սարգսյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014, 2015
2.	Մայրենի	Դ. Գյուրջիյան, Ն. Հեքեքյան	«Էդիթ Պրինտ»	2014, 2015
3.	Մաթեմատիկա	Վ.Հովհաննիսյան...	«Արևիկ»	2014, 2015
4.	Մաթեմատիկա	Ս. Մկրտչյան	«Ջանգակ»	2014, 2015
5.	Ռուսաց լեզու	Ն. Բայբուրջյան	«ՄԱՆՄԱՐ»	2016
6.	Ռուսաց լեզու	Բ. Եսաջանյան, Վ.Խանգրատյան	«Էդիթ Պրինտ»	2016
7.	Ռուսաց լեզու (խորաց. ուս. համ.)	Բ. Եսաջանյան, Լ. Բալասանյան	«Ֆիլին»	2014
8.	Անգլերեն	Գ. Գասպարյան...	«Արևիկ»	2015
9.	Անգլերեն ABC-3	Մ. Ապրեսյան...	«ՄԱՆՄԱՐ»	2015
10.	Ֆրանսերեն «Bon voyage -1»	Կ. Ամիրյան	«ՄԱՆՄԱՐ»	2015
11.	Գերմաներեն	Մ. Աստվածատրյան, Ս. Սարգսյան	«ՄԱՆՄԱՐ»	2015
12.	Ես և շրջակա աշխարհը	Ա. Հովսեփյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014, 2015
13.	Ես և շրջակա աշխարհը	Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան	«Աստղիկ Գրատուն»	2014, 2015
14.	Երաժշտություն	Յու.Յուզբաշյան, Ա.Փահլևանյան	«Ջանգակ»	2016
15.	Կերպարվեստ	Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան	«Ջանգակ»	2015, 2016

16.	Տեխնոլոգիա	Ս. Հովսեփյան ...	«Տիգրան Մեծ»	2014, 2015
17.	Ֆիզկուլտուրա	Գ. Ծառուկյան...	«Աստղիկ Գր.»	2016
18.	Ալափ-բիթ	Մուրադովա Տ. Ա. ...	«Նոյյան Տապան»	2007
19.	Շախմատ	Հ.Թումանյան	«Հայաստանի շախմատի ակադեմիա»	2015
20.	Եզդիերեն լեզու և գրականություն	Ա. Թամոյան, Հ. Թամոյան	«Սպիկա»	2016
21.	Մայրենի Լեզու (քրդ.)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2012

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Մայրենի	Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան	«Էդիթ Պրինտ»	2015, 2016
2.	Մայրենի	Կ. Թորոսյան...	«ՄԱՆՄԱՐ»	2015, 2016
3.	Մաթեմատիկա	Վ. Հովհաննիսյան...	«Արևիկ»	2015, 2016
4.	Մաթեմատիկա	Ս. Մկրտչյան...	«Ջանգակ»	2015, 2016
5.	Ռուսաց լեզու	Ն.Բայրություն	«ՄԱՆՄԱՐ»	2014
6.	Ռուսաց լեզու	Բ. Եսաջանյան...	«Էդիթ Պրինտ»	2014
7.	Ռուսաց լեզու (խ.ուս.հ.)	Բ. Եսաջանյան...	«Ֆիլին»	2014
8.	Անգլերեն	Գ.Գասպարյան ...	«Արևիկ»	2016
9.	Անգլերեն	Մ. Ապրեսյան...	«ՄԱՆՄԱՐ»	2016
10.	Ֆրանսերեն «Bon voyage -2»	Կ.Ամիրյան	«ՄԱՆՄԱՐ»	2016
11.	Գերմաներեն	Մ.Աստվածատրյան, Ս.Սարգսյան	«ՄԱՆՄԱՐ»	2016
12.	Ես և շրջակա աշխարհը	Ա. Հովսեփյան...	«ՄԱՆՄԱՐ»	2015, 2016
13.	Ես և շրջակա աշխարհը	Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան	«Աստղիկ Գրատուն»	2015, 2016
14.	Երաժշտություն	Յու. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան	«Ջանգակ»	2014
15.	Կերպարվեստ	Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան	«Ջանգակ»	2015, 2016
16.	Տեխնոլոգիա	Ս. Հովսեփյան ...	«Տիգրան Մեծ»	2015, 2016
17.	Շախմատ	Հ.Թումանյան	«Հայաստանի շախմատի ակադեմիա»	2016
18.	Ֆիզկուլտուրա	Գ. Ծառուկյան...	«Աստղիկ Գր.»	2014
19.	Ալափ-բիթ	Մուրադովա Տ. Ա. ...	«Նոյյան Տապան»	2007
20.	Եզդիերեն լեզու և գրականություն	Ա. Թամոյան, Հ. Թամոյան	«Սպիկա»	2016
21.	Մայրենի լեզու (քրդ.)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2012

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Մայրենի	Դ. Գյուրջինյան ...	«Էդիթ Պրինտ»	2015
2.	Մաթեմատիկա	Բ. Նահապետյան, Ա. Աբրահամյան	«ՄԱՆՄԱՐ»	2015
3.	Ռուսաց լեզու	Ն. Առաքելյան...	«Տիգրան Մեծ»	2014
4.	Ռուսաց լեզու	Տ. Բաբայան...	«ՄԱՆՄԱՐ»	2014
5.	Ռուսաց լեզու (խ.ու.հ.)	Բ. Եսաջանյան...	«Ֆիլին»	2014
6.	Անգլերեն	Գ. Գասպարյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014
7.	Անգլերեն	Լ. Գրիգորյան	«Զանգակ»	2014
8.	Ֆրանսերեն	Ա. Կուլիգինա	«Անտարես»	2014
9.	Գերմաներեն	Ի. Բիմ...	«Անտարես»	2014
10.	Հայոց եկ. պատմ.	Վ. Ղանդիլյան...	«Տիգրան Մեծ»	2014
11.	Հայրենագիտություն	Ա. Հովսեփյան...	«ՄԱՆՄԱՐ»	2013
12.	Բնագիտություն	Է. Ղազարյան...	«Աստղիկ Գր.»	2013
13.	Բնագիտություն	Գ. Պետրոսյան...	«Զանգակ»	2013
14.	Երաժշտություն	Յու. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան	«Զանգակ»	2015
15.	Տեխնոլոգիա	Ա. Հովսեփյան...	«Տիգրան Մեծ»	2014
16.	Եզդիերեն լեզու և գրականություն	Ա. Թամոյան, Հ. Թամոյան	«Սպիկա»	2016
17.	Մայրենի լեզու (քրդ.)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2014

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Մայրենի	Դ. Գյուրջինյան...	«Էդիթ Պրինտ»	2016
2.	Մաթեմատիկա	Բ. Նահապետյան, Ա. Աբրահամյան	«ՄԱՆՄԱՐ»	2016
3.	Ռուսաց լեզու	Ն. Առաքելյան...	«Տիգրան Մեծ»	2015
4.	Ռուսաց լեզու	Տ. Բաբայան...	«Մանմար»	2015
5.	Ռուսաց լեզու (խորացված ուս. համար)	Բ. Եսաջանյան...	«Ֆիլին»	2014
6.	Անգլերեն	Գ. Գասպարյան	«ՄԱՆՄԱՐ»	2015
7.	Անգլերեն	Լ. Գրիգորյան	«Զանգակ»	2015
8.	Ֆրանսերեն	Ն. Սելիվանովա...	«Անտարես»	2015
9.	Գերմաներեն	Ի. Բիմ	«Անտարես»	2015
10.	Հայոց պատմություն	Բ. Հարությունյան...	«ՄԱՆՄԱՐ»	2013
11.	Հայոց պատմություն	Ա. Մելքոնյան...	«Զանգակ»	2013
12.	Հայոց եկ. պատմ.	Վ. Ղանդիլյան...	«Տիգրան Մեծ»	2014
13.	Համաշ. պատմություն	Ա. Ստեփանյան, Ա. Քոսյան	«Զանգակ»	2013
14.	Աշխարհագրություն	Ա. Հովսեփյան...	«Աստղիկ Գր.»	2013
15.	Բնագիտություն	Է. Ղազարյան...	«Աստղիկ Գր.»	2014
16.	Բնագիտություն	Գ. Պետրոսյան...	«Զանգակ»	2014
17.	Ինֆորմատիկա	Ս. Ավետիսյան, Ս. Դանիելյան	«Տիգրան Մեծ»	2015
18.	Երաժշտություն	Յու. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան	«Զանգակ»	2016

19.	Տեխնոլոգիա	Ս. Հովսեփյան	«Տիգրան -Մեծ»	2015
20.	Եզդիներեն լեզու և գրականություն	Ա. Թամոյան, Հ. Թամոյան	«Սպիկա»	2014
21.	Մայրենի լեզու և գրականություն (քրդերեն)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2014

ՅՈՒՅԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Հայոց լեզու	Հ. Բարսեղյան...	«Աստղիկ Գրատուն»	2016
2.	Գրականություն	Դ. Գասպարյան	«Տիգրան Մեծ»	2016
3.	Հանրահաշիվ	Ս.Նիկոլյսկի...	«Անտարես»	2016
4.	Երկրաչափություն	Լ. Աթանասյան...	«Զանգակ»	2016
5.	Ռուսաց լեզու	Ն. Առաքելյան...	«Տիգրան Մեծ»	2016
6.	Ռուսաց լեզու	Տ. Բաբայան...	«ՄԱՆՄԱՐ»	2016
7.	Ռուսաց լեզու (խ.ուս.հ.)	Բ. Եսաջանյան...	«Ֆիլին»	2014
8.	Անգլերեն	Գ. Գասպարյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014
9.	Անգլերեն	Լ. Գրիգորյան	«Զանգակ»	2014
10.	Ֆրանսերեն	Ն. Սելիվանովա, Է. Բերեգովսկայա	«Անտարես»	2014
11.	Գերմաներեն	Ի. Բիմ	«Անտարես»	2014
12.	Հայոց պատմություն	Բ. Հարությունյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014
13.	Հայոց պատմություն	Ա. Մելքոնյան...	«Զանգակ»	2014
14.	Հայոց եկ. պատմ.	Վ. Ղանդիլյան...	«Տիգրան Մեծ»	2013
15.	Համաշխ. պատմություն	Գ. Հարությունյան, Ա. Նազարյան	«Զանգակ»	2014
16.	Աշխարհագրություն	Ռ.Մարգարյան...	«ՄԱՆՄԱՐ»	2013
17.	Ֆիզիկա	Էդ. Ղազարյան...	«Էդիթ Պրինտ»	2013
18.	Ֆիզիկա	Ս.Գրոմով...	«Անտարես»	2013
19.	Քիմիա	Լ.Սահակյան...	«Տիգրան Մեծ»	2013
20.	Քիմիա	Գ. Ռուձիտիս, Ֆ. Ֆելդման	«Անտարես»	2013
21.	Կենսաբանություն	Տ.Թանգամյան, Ս. Սիսակյան	«Տիգրան Մեծ»	2013
22.	Կենսաբանություն	Է. Գևորգյան...	«Աստղիկ Գրատուն»	2013
23.	Ինֆորմատիկա	Ս. Ավետիսյան, Ս. Դանիելյան	«Տիգրան Մեծ»	2016
24.	Տեխնոլոգիա	Ս. Հովսեփյան...	«Տիգրան Մեծ»	2016
25.	Եզդիներեն լեզու և գրականություն	Ա. Թամոյան, Հ. Թամոյան	«Սպիկա»	2014
26.	Երաժշտություն	Յու. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան	«Զանգակ»	2013
27.	Մայրենի լեզու և գրակ. (քրդերեն)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2014

Ուժեղորոշ ԴԱՍԱՐԱՆ

1.	Հայոց լեզու	Հ. Բարսեղյան...	«Աստղիկ Գր.»	2012
2.	Գրականություն	Դ. Գասպարյան	«Տիգրան Մեծ»	2012
3.	Հանրահաշիվ	Ս.Նիկոլյսկի...	«Անտարես»	2013
4.	Երկրաչափություն	Լ.Աթանասյան...	«Ջանգակ»	2012
5.	Ռուսաց լեզու	Ն.Ռաֆայելյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014
6.	Ռուսաց լեզու	Բ. Եսաջանյան...	«Անտարես»	2014
7.	Ռուսաց լեզու (խ.ուս.հ.)	Բ. Եսաջանյան...	«Ֆիլին»	2014
8.	Անգլերեն	Գ. Գասպարյան...	«Մանմար»	2015
9.	Անգլերեն	Լ. Գրիգորյան	«Ջանգակ»	2015
10.	Ֆրանսերեն	Ն. Սելիվանովա...	«Անտարես»	2015
11.	Գերմաներեն	Ի. Բիմ	«Անտարես»	2015
12.	Հայոց պատմություն	Վ. Բարխուդարյան...	«ՄԱՆՄԱՐ»	2013
13.	Հայոց պատմություն	Ա. Մելքոնյան...	«Ջանգակ»	2013
14.	Հայոց եկեղեցու պատմ.	Վ. Ղանդիլյան...	«Տիգրան Մեծ»	2013
15.	Համաշխ. պատմություն	Ա. Ստեփանյան, Ա.Նազարյան	«Ջանգակ»	2013
16.	Համաշխ. Պատմ.	Ն. Հովհաննիսյան...	«Էդիթ Պրինտ»	2013
17.	Աշխարհագրություն	Մ.Մանասյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014
18.	Հասարակագիտ.	Ս. Պետրոսյան...	«Տիգրան Մեծ»	2013
19.	Հասարակագիտ	Ա. Գյուլբուրադյան...	«Ջանգակ»	2013
20.	Ֆիզիկա	Էդ. Ղազարյան...	«Էդիթ Պրինտ»	2014
21.	Ֆիզիկա	Ս. Գրոմով...	«Անտարես»	2014
22.	Քիմիա	Լ.Սահակյան...	«Տիգրան Մեծ»	2014
23.	Քիմիա	Գ. Ռուժիտիս,Ֆ. Ֆելդման	«Անտարես»	2014
24.	Կենսաբանություն	Ս. Ամիրյան...	«Աստղիկ Գր.»	2014
25.	Կենսաբանություն	Ս. Սիսակյան	«Տիգրան Մեծ»	2014
26.	Ինֆորմատիկա	Ս. Ավետիսյան...	«Տիգրան Մեծ»	2013
27.	Նախնական զինվորական պատրաստ.	Վ.Օհանյան...	«Աստղիկ Գրատուն»	2014
28.	Եզդիերեն լեզու և գրականություն	Ա. Թամոյան, Հ. Թամոյան	«Սպիկա»	2011
29.	Մայրենի լեզու և գրակ. (քրդերեն)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2015

ԻՆՆԵՐՈՐՇ ԴԱՍԱՐԱՆ

1.	Հայոց լեզու	Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան	«Աստղիկ Գրատուն»	2013
2.	Գրականություն	Դ. Գասպարյան	«Տիգրան Մեծ»	2013
3.	Հանրահաշիվ	Ս.Նիկոլյսկի...	«Անտարես»	2013
4.	Երկրաչափություն	Լ.Աթանասյան...	«Ջանգակ»	2013
5.	Ռուսաց լեզու	Ն.Ռաֆայելյան...	«ՄԱՆՄԱՐ»	2015
6.	Ռուսաց լեզու	Բ. Եսաջանյան...	«Անտարես»	2015
7.	Ռուսաց լեզու	Բ. Եսաջանյան...	«Ֆիլին»	2014

	(խորացված ուս. համ.)			
8.	Անգլերեն	Գ. Գասպարյան	«ՄԱՆՄԱՐ»	2016
9.	Անգլերեն	Լ. Գրիգորյան	«Զանգակ»	2016
10.	Ֆրանսերեն	Ն. Սելիվանովա, Է. Բերեգովսկայա	«Անտարես»	2016
11.	Գերմաներեն	Ի. Բիմ	«Անտարես»	2016
12.	Հայոց պատմություն	Վ. Բարխուդարյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014
13.	Հայոց պատմություն	Է. Գևորգյան...	«Զանգակ»	2014
14.	Հայոց եկ. պատմ.	Վ. Ղանդիլյան...	«Տիգրան Մեծ»	2013
15.	Համաշխ. պատմ.	Ա. Ստեփանյան...	«Զանգակ»	2014
16.	Համաշխ. պատմ.	Ն. Հովհաննիսյան..	«Էդիթ Պրինտ»	2014
17.	Հայաստանի աշխարհագրություն	Մ. Մանասյան Ա. Հովսեփյան	«Տիգրան Մեծ»	2014
18.	Հասարակագիտ.	Գ. Ղազինյան...	«Տիգրան Մեծ»	2014
19.	Հասարակագիտ.	Ա. Գյուլբուրդադյան...	«Զանգակ»	2014
20.	Ֆիզիկա	Է. Ղազարյան...	«Էդիթ Պրինտ»	2015
21.	Ֆիզիկա	Ս. Գրոմով...	«Անտարես»	2015
22.	Քիմիա	Գ. Ռուձիտիս	«Անտարես»	2015
23.	Քիմիա	Լ. Սահակյան...	«Տիգրան-Մեծ»	2015
24.	Կենսաբանություն	Տ. Թանգամյան...	«Զանգակ»	2014
25.	Կենսաբանություն	Է. Գևորգյան...	«Աստղիկ Գր.»	2014
26.	Ինֆորմատիկա	Ս. Ավետիսյան, Ս. Դանիելյան	«Տիգրան Մեծ»	2014
27.	Նախնական զինվ. պատրաստություն	Վ. Օհանյան...	«Աստղիկ Գրատուն»	2015
28.	Եզրիերեն լեզու և գրականություն	Ա. Թամոյան, Հ. Թամոյան	«Սպիկա»	2012
29.	Մայրենի լեզու և գրա- կանություն (քրդերեն)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2015

ՏԱՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Հայոց լեզու (ընդհ. և քնագիտամաթ. հոս- քերի համար)	Լ. Եզեկյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014
2.	Հայոց լեզու (հում. հոսքի համար)	Լ. Եզեկյան...	«ՄԱՆՄԱՐ»	2014
3.	Հայ գրականություն (ընդհ. և քնագիտա- մաթ. հոսքերի համար)	Լ. Մնացականյան, Վ. Ներսիսյան	«ՄԱՆՄԱՐ»	2014
4.	Հայ գրականություն (հում. հոսքի համար)	Հ. Բախչինյան, Ս. Սարինյան	«Արևիկ»	2014
5.	Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր. ընդհ. և հումանիտար հոսքերի համար	Գ. Գևորգյան, Ա. Սահակյան	«Էդիթ Պրինտ»	2009

6.	Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր. բնագիտամաթ. հոսքի համար	Գ. Գևորգյան, Ա. Սահակյան	«Տիգրան Մեծ»	2009
7.	Երկրաչափություն (ընդհ. և հումանիտար հոսքերի համար)	Ս. Հակոբյան	«Տիգրան Մեծ»	2009
8.	Երկրաչափություն (բնագիտամաթ. հոսքի հ.)	Ի. Ֆ. Շարիգին	«Անտարես»	2009
9.	Ռուսաց լեզու (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի համար)	Ն. Բայբուրջյան...	«ՄԱՆՄԱՐ»	2010
10.	Ռուսաց լեզու (հուման. հոսքի համար)	Ռ. Գրծեյան...	«ՄԱՆՄԱՐ»	2011
11.	Անգլերեն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքի համար)	Ս. Բաղդասարյան...	«ՄԱՆՄԱՐ»	2010
12.	Անգլերեն (հում. հոսքի համար)	Ս. Բաղդասարյան...	«ՄԱՆՄԱՐ»	2010
13.	Ֆրանսերեն	Վ. Ստեփանյան...	«ՄԱՆՄԱՐ»	2010
14.	Գերմաներեն	Կ. Հովհաննիսյան...	«Ջանգակ»	2010
15.	Հայոց պատմություն (հում. հոսքի համար)	Ա. Մելքոնյան ...	«Ջանգակ»	2014
16.	Հայոց պատմություն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի համար)	Ա. Մելքոնյան ...	«Ջանգակ»	2014
17.	Հայոց եկ. պատմ.	Վ. Ղանդիլյան...	«Տիգրան Մեծ»	2013
18.	Համաշխ. պատմություն (հում. հոսքի համար)	Ա. Քոսյան...	«Ջանգակ»	2009
19.	Համաշխ. պատմություն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի համար)	Ա. Քոսյան...	«Ջանգակ»	2009
20.	Աշխարհագրություն	Մ. Մանասյան...	«Ջանգակ»	2010
21.	Հասարակագիտություն	Ս. Պետրոսյան...	«Տիգրան Մեծ»	2014
22.	Ֆիզիկա (ընդհ. և բնագիտամաթ. հոսքի հ.)	Է. Ղազարյան...	«Էդիթ Պրինտ»	2010
23.	Ֆիզիկա (հումանիտար հոսքի համար)	Հ. Կարայան	«Աստղիկ Գրատուն»	2011
24.	Քիմիա (ընդհ. և բնագիտամաթ. հոսքի համար)	Ա. Խաչատրյան...	«Ջանգակ»	2010
25.	Քիմիա (հումանիտար հոսքի համար)	Լ. Սահակյան,,,	«Անտարես»	2011

26.	Կենսաբանություն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքի համար)	Է. Գևորգյան...	«Աստղիկ Գրատուն»	2010
27.	Կենսաբանություն (հումանիտար հոսքի համար)	Է. Գևորգյան...	«Աստղիկ Գրատուն»	2011
28.	Ինֆորմատիկա (բնագիտամաթ. հոսքի հ.)	Ս. Ավետիսյան, Ս. Դանիելյան	«Տիգրան Մեծ»	2010
29.	Ինֆորմատիկա (ընդհ. և հում. հոսքի համար)	Ս. Ավետիսյան, Ս. Դանիելյան	«Տիգրան Մեծ»	2010
30.	Նախնական զինվորական պատրաստություն	Վ. Օհանյան...	«Աստղիկ Գրատուն»	2010
31.	Եզրիներեն լեզու և գրականություն	Ա. Թամոյան, Հ. Թամոյան	«Սպիկա»	2013
32.	Մայրենի լեզու և գրականություն (քրդերեն)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2016

ՏԱՆՄԵԿԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Հայոց լեզու (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի համար)	Լ. Եզեկյան...	«ՄԱՆՄԱՐ»	2015
2.	Հայոց լեզու (հում. հոսքի համար)	Լ. Եզեկյան...	«ՄԱՆՄԱՐ»	2015
3.	Հայ գրականություն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի համար)	Վ. Կիրակոսյան, Զ. Ավետիսյան	«ՄԱՆՄԱՐ»	2015
4.	Հայ գրականություն (հում. հոսքի համար)	Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան	«Արևիկ»	2015
5.	Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր (ընդհ. և հում. հոսքերի համար)	Գ. Գևորգյան, Ա. Սահակյան	«Էդիթ Պրինտ»	2010
6.	Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր (բնագիտամաթ. հոսքի հ.)	Գ. Գևորգյան, Ա. Սահակյան	«Տիգրան Մեծ»	2010
7.	Երկրաչափություն (ընդհ. և հումանիտար հոսքերի համար)	Ս. Հակոբյան	«Տիգրան Մեծ»	2010
8.	Երկրաչափություն (բնագիտամաթ. հոսքի հ.)	Ի.Ֆ. Շարիֆին	«Անտարես»	2010
9.	Ռուսաց լեզու (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի համար)	Ն.Բայբուրջյան...	«ՄԱՆՄԱՐ»	2010
10.	Ռուսաց լեզու (հումանիտ. հոսքի հ.)	Ռ. Գրծեյան...	«ՄԱՆՄԱՐ»	2011

11.	Անգլերեն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքի հ.)	Ս.Բաղդասարյան...	«ՄԱՆՄԱՐ»	2010
12.	Անգլերեն (հում. հոսքի հ.)	Ս.Բաղդասարյան...	«ՄԱՆՄԱՐ»	2010
13.	Ֆրանսերեն	Վ.Ստեփանյան...	«ՄԱՆՄԱՐ»	2010
14.	Գերմաներեն	Կ. Հովհաննիսյան...	«Զանգակ»	2010
15.	Հայոց պատմություն (հում. հոսքի համար)	Ա. Մելքոնյան...	«Զանգակ»	2015
16.	Հայոց պատմություն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի համար)	Ա. Մելքոնյան...	«Զանգակ»	2015
17.	Հայկական հարցի պատմություն-9-10	Ռ.Փիրումյան	«Հայ Էդիթ»	2004
18.	Հայոց եկ. պատմություն	Վ. Ղանդիլյան ...	«Տիգրան Մեծ»	2013
19.	Համաշխարհային պատմ. (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի հ.)	Ռ. Սաֆրաստյան...	«Զանգակ»	2010
20.	Համաշխարհային պատմություն (հում. հոսքի հ.)	Գ. Հարությունյան...	«Զանգակ»	2010
21.	Աշխարհագրություն	Ա. Պոտոսյան...	«Զանգակ»	2010
22.	Հասարակագիտություն	Գ. Ղազինյան...	«Տիգրան Մեծ»	2015
23.	Ֆիզիկա (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի հ.)	Է. Ղազարյան...	«Էդիթ Պրինտ»	2010
24.	Ֆիզիկա (հումանիտար հոսքի համար)	Հ. Կարայան	«Աստղիկ Գրատուն»	2011
25.	Քիմիա (ընդհ. և բնագիտամաթ. հոսքի համար)	Լ. Սահակյան...	«Զանգակ»	2010
26.	Քիմիա (հումանիտար հոսքի համար)	Լ. Սահակյան,,	«Անտարես»	2011
27.	Կենսաբանություն (ընդհ. և բնագիտամաթեմատիկ. հոսքի հ.)	Է. Գևորգյան...	«Աստղիկ Գրատուն»	2010
28.	Կենսաբանություն (հումանիտար հոսքի հ.)	Է. Գևորգյան...	«Աստղիկ Գրատուն»	2011
29.	Ինֆորմատիկա (բնագիտամաթեմ. հոսքի հ.)	Ս. Ավետիսյան, Ս. Դանիելյան	«Տիգրան Մեծ»	2011
30.	Ինֆորմատիկա (ընդհ. և հում. հոսքի համար)	Ս. Ավետիսյան, Ս. Դանիելյան	«Տիգրան Մեծ»	2011
31.	Նախնական զինվորական պատրաստություն	Վ. Օհանյան...	«Աստղիկ Գրատուն»	2010
32.	Եզրհերեն լեզու և գրակ.	Ա. Թամոյան...	«Սպիկա»	2014
33.	Մայրենի լեզու և գրականություն (քրդերեն)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2016

ՏԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.	Հայոց լեզու (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի համար)	Լ. Եզեկյան...	«ՄԱՆՄԱՐ»	2016
2.	Հայոց լեզու (հում. հոսքի հ.)	Լ. Եզեկյան...	«ՄԱՆՄԱՐ»	2016
3.	Հայ գրականություն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի հ.)	Ա. Եղիազարյան	«ՄԱՆՄԱՐ»	2016
4.	Հայ գրականություն (հում. հոսքի համար)	Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան	«Արևիկ»	2016
5.	Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր (ընդհ. և հում. հոսքերի հ.)	Գ.Գևորգյան...	«Էդիթ Պրինտ»	2011
6.	Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր (բնագիտամաթ. հոսքի հ.)	Գ.Գևորգյան...	«Տիգրան Մեծ»	2011
7.	Երկրաչափություն (ընդհ. և հումանիտար հոսքերի հ.)	Ս. Հակոբյան	«Տիգրան Մեծ»	2011
8.	Երկրաչափություն (բնագիտամաթ. հոսքի հ.)	Ի.Ֆ. Շարիգին	«Անտարես»	2011
9.	Ինֆորմատիկա (բնագիտամաթ. հոսքի հ.)	Ս. Ավետիսյան, Ս. Դանիելյան	«Տիգրան Մեծ»	2012
10.	Ինֆորմատիկա (ընդհանուր հոսքի հ.)	Ս. Ավետիսյան, Ս. Դանիելյան	«Տիգրան Մեծ»	2012
11.	Ռուսաց լեզու (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի համար)	Ն.Բայրությունյան...	«ՄԱՆՄԱՐ»	2011
12.	Ռուսաց լեզու (հում. հոսքի համար)	Ռ. Գրծելյան	«ՄԱՆՄԱՐ»	2012
13.	Անգլերեն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքի հ.)	Ս.Բաղդասարյան, Ս. Գյուրջայանց	«ՄԱՆՄԱՐ»	2011
14.	Անգլերեն (հում. հոսքի համար)	Ս.Բաղդասարյան, Ս. Գյուրջայանց	«ՄԱՆՄԱՐ»	2011
15.	Ֆրանսերեն	Վ.Ստեփանյան...	«ՄԱՆՄԱՐ»	2011
16.	Գերմաներեն	Կ. Հովհաննիսյան...	«Զանգակ»	2011
17.	Հայոց պատմություն (հում. հոսքի համար)	Է. Գևորգյան...	«Զանգակ»	2016
18.	Հայոց պատմություն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի հ.)	Ա. Մելքոնյան...	«Զանգակ»	2016
19.	Համաշխարհային պատմություն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի համար)	Ա. Նազարյան...	«Զանգակ»	2011

20.	Համաշխարհային պատմություն (հում. հոսքի համար)	Վ. Պետրոսյան...	«Զանգակ»	2011
21.	Աշխարհագրություն	Մ.Մանասյան...	«Զանգակ»	2011
22.	Հասարակագիտ.	Ս. Պետրոսյան...	«Տիգրան Մեծ»	2016
23.	Ֆիզիկա (ընդհ. և բնագիտամաթ. հոսքերի հ.)	Է. Ղազարյան...	«Էդիթ Պրինտ»	2011
24.	Քիմիա (ընդհ. և բնագիտամաթեմատիկ. հոսքի հ.)	Լ. Սահակյան...	«Զանգակ»	2011
25.	Կենսաբանություն (ընդհ. և բնագիտամաթ. հոսքի համար)	Է. Գևորգյան...	«Աստղիկ Գրատուն»	2011
26.	Եզդիերեն լեզու և գրականություն	Ա. Թամոյան, Հ. Թամոյան	«Սպիկա»	2015
27.	Մայրենի լեզու և գրակ. (քրդերեն)	Ալիխանե Մամե	«Սպիկա»	2016